Հայաստանի Հանրապետության
Արտակարգ Իրավիճակների Նախարարություն

Հայաստանի Հանրապետության Հրշեջ-փրկարարական տեխնիկայի ձեռքբերման ծրագրի նախապատրաստական աշխատանքների մասին զեկույց

հուլիս 2017թ.

Ճապոնական միջազգային համագործակցության գործակալություն(ՃՄՀԳ)

ԱՆԳԵՐՈՍԵԿ ՓԲԸ

ԿԱՏԱՀԻՐԱՄԻՋԱԶԳԱՅԻՆԻՆԺԻՆԵՐԱԿԱՆՓԲԸ

IL
JR
17-063

Նախաբան

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (JICA), Հայաստանի Հանրապետության հրշեջ սարքավորումների բարելավման ծրագրի համաձայն, որոշում է ընդունել իրականացնել նախապատրաստական հետազոտություն, ինչը վստահել է Անջերոսեկ և Կատահիրա ճարտարագիտական համատեղ ընկերություններին:

Հետազոտող խումբը՝ խորհրդակցելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, 2016թ.-ի սեպտեմբերից մինչև 2017թ-ի հուլիսը թիրախային մարզերում իրականացրել է դաշտային հետազոտություններ: Վերադառնալով հայրենիք՝ կատարվել են ներքին աշխատանքներ, որոնց հիման վրա կազմվել է ստորև ներկայացվող հետազոտության ավարտուն զեկույցը:

Հույս ունեմ, որ տվյալ զեկույցը՝ նպաստելով այս նախագծի խթանմանը, կաջակցի երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների հետագա զարգացմանը:

Վերջում, իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բոլոր այն անձանց, ովքեր մասնակցել և աջակցել են հետազոտություններին:

հուլիս 2017թ.

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության
Արդյունաբերական զարգացման և հանրային քաղաքականության բաժնի ղեկավար՝
Տոշիյուկի Նակամուրա

Ամփոփագիր

1.Երկրի ակնարկ

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) գտնվում է Կովկասում, զբաղեցնում է 29 743 կմ2 տարածք (Ճապոնիայի մոտ 1/13 մասը), բնակչության թիվը կազմում մոտ 3 միլիոն մարդ (ըստ 2015 թ. արտաքին գործերի նախարարություն տվյալների), հանդիսանում է ծովային ելք չունեցող ցամաքային երկիր: Դաշտային տարածքները քիչ են և երկրի հողատարածքի 90%-ը գտնվում է 1000-3000 մ բարձրության վրա: Ձմռանը օդի ամենացածր ջերմաստիճանը կազմում է -40□-ը, ամռանը ամենաբարձր ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 40□-ի: Ձյան շերտի հաստությունը կարող է հասնել մինչև 1-2 մ:

Սովետական միության փլուզման հետ կապված 1992թ.-ին ՀՀ-ի համախառն ներքին արդյունքը կազմել է -42%, իսկ 1993թ-ին՝ զգալիորեն վատաթարանալով, այն կազմել է -9%: Չնայած դրան, շնորհիվ երկրի կառավարման համակարգի արագորեն անցմանը շուկայական հարաբերությունների՝ 1994թ-ին աճման տենպը փոխվել է դեպի դրական ուղղության: 2002-2007թթ 6 տարի անընդմեջ արձանագրվել է բարձր երկնիշ աճ: Այնուհետև, 2009թ-ին տեղի ունեցած համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքով, նախորդ տարվա համեմատ աճման տեմպը կազմել է -14.1%: 2010թ-ին աճման տեմպը կրկին դարձել է դրական (2.2%) և մինչև 2015թ շարունակել է աճել միջինում 3%-ով: 2016թ.-ին ՀՀ-ի ՀՆԱ-ն կազմել է մոտ 10 մլրդ ԱՄՆ դոլար: ՀՆԱ-ի իրական աճը կազմում է 0.2% (Համաշխարհային Բանկ 2016): ՀՆԱ-ի բացվածքը առաջնային արդյունաբերությունում կազմում է 1.9%, երկրորդայինում՝ 29.1% և երրորդայինում 51.3%: Ինպես նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 3.525 ԱՄՆ դոլար (Համաշխարհային Բանկ 2016):

ՀՀ-ի հիմնական տնտեսությունները հանդիսնում են գյուղատնտեսությունը (ցորեն, բամբակ, խաղող, բանջարեղեն և այլն), ադամանդի հղկում և ոսկերչական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, ինչպես նաև այն հանդիսանում է ալյումինումի, պղինձի, ցինկի և այլ գունավոր մետաղների, օգտակար հանածոների արտահանող երկիր: Մյուս կողմից երկրի էներգետիկ ռեսուրսները առատ չեն, ինչի հետևանքով այն ունի բնական գազի և նավթամթերքների բարձր կախվածություն արտասահամանյան երկրներից: Երկրի առևտրային շրջանառության արտահանումը կազմում է 2.98 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը `4.2 մլրդ ԱՄՆ դոլար, ինչի արդյունքում այն ունի զգալի առևտրային դեֆիցիտ:

2. Նախագծի նախադրյալները, պատմությունը և ակնարկը

Ճապոնիան, մինչ այժմ թիրախավորելով ՀՀ-ի մայրաքաղաք Երևանը (ստորագրված 2009թ. Հ/Փ), 28 հակահրդեհային մեքենաների տեխնիկական սպասարկման հետ միասին, իրականացրել է ջրային բաքով հակահրդեհային պոմպային մեքենաների (հրշեջ մեքենաներ) ծրագրային ապահովման բաղադրիչների ներդրնում՝ կազմելով սանդուղային մեքենաներով արդյունավետ հրշեջ-փրկարարական աշխատանքների

իրականացման ձեռնարկ, և իրականացրել է շահագործման ուղղորդում: Որպես արդյունք հրշեջ-փրկարարական համակարգը մայրաքաղաքում մեծապես բարելավվել է:

Այնուամենայնիվ, քանի որ ՀՀ-ի մարզերում գործող հրշեջ մեքենաների 90%-ը տեղակայված են եղել նախկին Խորհրդային Միության ժամանակաշրջանում և դրանց արտադրությունից անցել է ավելի քան 25 տարի, ապա հաճախացել են տրանսպորտային միջոցների և հակահրդեհային սարքավորումների խափանումները: Բացի այդ, հնացած հակահրդեհային սարքավորումների կիրառումը խոչընդոտում է հրշեջ-փրկարարական աշխատանքները, որոնք որպես հրշեջ մեքենաներ ունեն խախտված ֆունկցիաներ: Քանի որ ՀՀ-ի մարզերում, պետական ֆինանսավորումը դեռևս գտնվում է ծանր վիճակում, ապա հնարավոր չէ իրականացնել հնացած մեքենաների պատշաճ բարելավում:

Տվյալ նախագծի թիրախային մարզերը հանդիսանում են Շիրակը (բնակչությունը մոտ 360 հազ. մարդ), Լոռին (մոտ 330 հազ. մարդ), Սյունիքը (մոտ 160 հազ. մարդ), որտեղ գտնվում են Երևանից հետո 2-4րդ մեծության քաղաքները (Գյումրի մոտ 160 հազ. մարդ, Վանաձոր մոտ 150 հազ. մարդ, Կապան մոտ 45 հազ. մարդ): Վերջին տարիներին բնակչության աճի և ուրբանիզացիայի մակարդակի բարձացման հետևանքով տեղի է ունեցել գյուղական վայրերից բնակչության ներհոսք վերը նշված մարզային քաղաքներ, ինչպես նաև արագացված սեփական տների և բարձրահարգ շենքերի կառուցման հետևանքով հաճախացել են հրդեհները, որոնց հետ զուգորդվում են նաև անտառային հրդեհները: Արդյունքում տվյալ մարզերում հակահրդեհային աշխատանքների քանակն ավելի բարձր է, համեմատած այլ մարզերի: Բացի այդ նեղ և կտրուկ տեղամասերում, ինչպես նաև ծայրահեղ ջերմաստիճանային պայմաններում աշխատող հրշեջ մեքենաները ենթարկվում են ծանր վնասման և քայքայման: Տվյալ մեքենաների թարմացումը և հակահրդեհային համակարգերի բարելավումը հանդիսանում են հրատապ խնդիրներ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ՀՀ-ի կառավարությունը որոշել է Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում բարելավել հակահրդեհային և փրկարարական համակարգերը, ինչի արդյունքում հրշեջ մեքենաների ձեռքբերման համար խնդրել է Ճապոնիային տրամադրել դրամաշնորհային օգնություն:

Ներկայիս նախագիծը հանդիսանում է բարձր արդիականությամբ ծրագիր, որը 2012թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է, որպես աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություն (N-281), ինչը հանդիսանում է ազգի կայուն զրգացման կարևորագույն տարրերից մեկը: Աղետային ռիսկերի նվազեցման միջոցառումների միջոցով կառավարությունը նպատակ ունի արտակարգ իրավիճակներում, ինչպես օրինակ բնական աղետների ժամանակ, պաշտպանել քաղաքացիներին, ինչպես նաև ազգային տարածքները: Նշված նպատակներին հասնելու համար, բնական աղետների, ինչպես նաև հրդեհների և դժբախտ պատահարների իրավիճակներում հարկավոր է ցուցաբերել արդյունավետ միջոցառումներ: Այստեղից հետևում է, որ «ամբողջ երկրի տարածքում հրշեջ-փրկարարական հնարավորությունների և սարքավարումների բարելավումը» հանդիսանում է կարևորագույն խնդիրներից մեկը: Տվյալ նախագծի նպատակները

նույնպես համահունչ են վերոհիշյալ քաղաքականության նպատակներին: Բարելավելով հրշեջ մեքենաները ՀՀ փրկարար ծառայությունում (ՓԾ), որպես կատարածու գործակալություն, կբարելավվեն հրշեջ-փրկարարական ծառայությունները Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում, ինչը նախատեսված է բնակչության թիրախային տարածքներում պաշտպանել մարդկանց կյանքը և սեփականությունը հրդեհներց և այլ աղետներից՝ ապահովելով տարածաշրջանային անվտանգությունը:

3. Հետազոտության արդյունքների ամփոփումը և նախագծի բովանդակությունը

ՀՀ կառավարությանը ի պատասխան Ճապոնիայի կառավարությանը որոշեց իրականացնել հակահրդեհային սարքավորումների տեխնիկական սպասարկման վերաբերյալ նախապատրաստական հետազոտություն ՓԾ-ում: ՀՀ-ի շահագրգիռ անձանց հետ խորհրդակցելու, ինչպես նաև թիրախային տարածաշրջաններում հետազոտությունների իրականացման նպատակով JICA-ն՝ առաջին դաշտային հետազոտության իրականացման համար 2016թ.-ի սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 13-ը և երկրորդ դաշտային հետազոտության իրականացման համար դեկտեմբերի 5-ից 21-ը, նախապատրաստական խումբ է ուղարկել ՀՀ: Հայրենիք վերադառնալուց հետո դաշտային հետազոտությունների հիման վրա նախագծվել է օպտիմալ սխեմատիկ բիզնես ծրագիր, որի բովանդակության ամփոփման հիման վրա կազմվել է նախապատրաստական հետազոտության զեկույց (սևագիր): Նախապատրաստական հետազոտության զեկույցը (սևագիր) քննարկելու նպատակով JICA-ն 2017թ. ապրիլի 16-17-ը հետազոտական խումբ է ուղարկել ՀՀ-ը, որտեղ շահագրգիռ անձանց հետ զեկույցի բովանդակության քննարկումից և հաստատմից հետո, 2017 թվականի ապրիլի 21-ին ձեռք է բերվել համաձայնություն:

Քննարկման արձանագրությունների հիման վրա որոշվել է ներկայացվող ծրագրի թիրախային 3 մարզերի՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի 18 հրշեջ կայաններին տրամադրել հրշեջ մեքենաներ, ինչպես նաև Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայանում տեղակայել շարժական տեխսպասարկման մեքենաներ:

Ստուգելով գույքի և սարքավորումների քանակը, գոյություն ունեցող հրշեջ մեքենաների օպերացիոն կարգավիճակը, ինչպես նաև հաշվի առնելով մարզերի առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր կայանի ջրախողովակի տրամագիծը, բնակչության քանակը, հրդեհների քանակությունը, ջրօգտագործման վիճակը, միջին և բարձրահարգ շենքերի քանակը, ճանապարհների թեքությունը և այլն, հիմնվելով ՀՀ-ի հրդեհների դեմ պայքարի դրույթների, ինչպես նաև ՓԾ-ի հրշեջ մեքենաների տեղակայման ծրագրի վրա, որոշվել են հայցվող սարքավորումների տեղակայման անհրաժեշտությունը, հրշեջ մեքենաների ճշգրիտ քանակությունը և դրանց տեսակները:

Հարկ է նշել, որ ՀՀ-ի Շրակի (6 հրշեջ ջոկատ), Լոռու (7 հրշեջ ջոկատ) և Սյունիքի (5 հրշեջ ջոկատ) մարզերում գտնվում են Երևանից հետո 2-4-րդ մեծության մարզային քաղաքները, որոնց հրշեջ ջոկատների իրավասության տակ գտնվող բնակչության թիվը

համապատասխանաբար կազմում է 360 հազ., 330 հազ. և 160 հազ. մարդ, հետևաբար որպես կարևոր տարածաշրջաններ ՓԾ-ն տեղակայված է հետևյալ երեք քաղաքներում, որոնց հրշեջ և փրկարարական ծառայությունների բարելավումը և հզորացումը հրատապ է:

Չնայած դրան, այս երեք մարզերում առկա են հետևյալ կարգավիճակում գտնվող հնացած հրշեջ-փրկարարական ծառայություններ՝

- Մաշված հրշեջ և սանդուղային մեքենաներ
- Հրշեջ ջրակատների միջև հեռավորությունը կազմում է ավելի քան 30կմ
- Սկսած 1991թ-ից հրշեջ մեքենաների թարմացում տեղի չի ունեցել (բացառությամբ №37, №48 և №54 հրշեջ ջրակատների)
- Այստեղ գտնվում են 80-150 միջին և բարձրահարգ շենքեր, որոնք ունեն ոչ միայն 3 հարկ, այլ նաև 6-9 հարկեր

Հաշվի առնելով այս նախնական ուսումնասիրությունների արդյունքները, նպատակ դնելով հրշեջ փրկարարարական ծառայությունները դարձնել արագ, արդյունավետ և անվտանգ, տվյալ մարզերի յուրաքանչյուր հրշեջ ջրակատ պետք է համալրվի 2 հրշեջ մեքենաներով (ընդհանուր 36 մեքենա), ինչպես նաև №37, №48 և №54 հրշեջ ջրակատներում պետք է տեղակայվեն ավտոսանդուղք: Բացի այդ, այս սարքավորումների կարգավորման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ է 1 շարժական արհեստանոց՝ համալրված վերանորոգման սարքավորումներով, որը կտեղակայվի Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայանում:

Տեղակայման ծրագիրը ներկայացված է աղյուսակում:

Ձեռք բերվող տեխնիկայի տեղաբաշխման աղյուսակ

No	տեղակայման նպատակակետը	մարզ	տեխնիկայի քանակը		
			հրշեջ մեքենա	Ավտո սանդուղք	շարժական տեխսպաս արկման մեքենա
1	No.37 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	1	---
2	No.38 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	---	---
3	No.39 ջոկատ (Գուգարք)	Լոռի	2	---	---
4	No.40 ջոկատ (Թումանյան)	Լոռի	2	---	---
5	No.41 ջոկատ (Ստեփանավան)	Լոռի	2	---	---
6	No.42 ջոկատ (Սպիտակ)	Լոռի	2	---	---
7	No.43 ջոկատ (Տաշիր)	Լոռի	2	---	---
8	No.48 ջոկատ (Գյումրի)	Շիրակ	2	1	---
9	No.49 ջոկատ (Արթիկ)	Շիրակ	2	---	---
10	No.50 ջոկատ (Ամասյա)	Շիրակ	2	---	---
11	No.51 ջոկատ (Անի)	Շիրակ	2	---	---
12	No.52 ջոկատ (Աշոցք)	Շիրակ	2	---	---
13	No.53 ջոկատ (Ախուրյան)	Շիրակ	2	---	---
14	No.54 ջոկատ (Կապան)	Սյունիք	2	1	---
15	No.55 ջոկատ (Գորիս)	Սյունիք	2	---	---
16	No.56 ջոկատ (Մեղրի)	Սյունիք	2	---	---
17	No.57 ջոկատ (Սիսյան)	Սյունիք	2	---	---
18	No.58 ջոկատ (Քաջարան)	Սյունիք	2	---	---
19	ՓԾ-ի բազա (Երևան)	Երևան	---	---	1
ընդհանուր			36	3	1

Հետևյալ ծրագրի թիրախային մարզերը՝ Շիրակ Լոռի և Սյունիք, գտնվում են 2000-3000մ բարձրության վրա: Բացի այդ այս մարզերի ճանապարհների մեծ մասը ասվալտապատ չէ, իսկ առատ ձյան տեղանքների հետևանքով ձմռանը ձյան շերտերը կարող են հասնել մի քանի մետրի: Այդ իսկ պատճառով, կարևոր է հստակեցնել սարքավորումների առանձնահատկությունները, որոնք կարող են իրականացնել հրշեջ-փրկարարական աշխատանքներ ծայրահեղ միջավայրային պայմաններում:

Հիմնական առանձնահատկությունները հետևյալն են.

Տեխնիկական առանձնահատկությունների աղյուսակ

Տեխնիկա	Հիմնական տեխնիկական բնութագիրը
Հրշեջ մեքենա	▪ տեսակը՝ Լիաքարշակ ▪ ջրի բաքի տարողությունը՝ 3,500լ ▪ մեքենայի քաշը՝ 13 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկանիշներ ▪ մարդկանց առավելագույն քանակը բեռնախցիկում/կաբինա/: 6 ▪ խցիկներ: 2 խցիկանի ▪ տեխնիկայում տեղադրվել է այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են ջրի փողրակներ, արտանետման և ներծծման խողովակները, կտրող գործիք, մարտական հանդեձանք հավաքածու/կոմպլեկտ/, ձեռքի ռադիոկայանի սարքավորումներ եւ այլ սարքավորումները
Ավտոսանդուղք	▪ ավտոսանդուղքի բարձրություն: 25մ ▪ տեխնիկայի քաշը : 16 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկություն ▪ մարդկանց առավելագույն քանակը բեռնախցիկում : 2 ▪ խցիկ : մեկ խցիկ ▪ զամբյուղ ▪ տեխնիկայում տեղադրվելու է այնպիսի սարքավորուններով , ինչպիսիք են փողրակներ, կոշտ ջրի խողովակներ, կտրող սարք, մարտական հանդեձանքի հավաքածու/կոմպլեկտ/, ձեռքի ռադիոկայաներ և այլ սարքավորումներ
Շարժական տեխսպասարկման մեքենա	▪ տեսակը՝ Լիաքարշակ ▪ տեխնիկայի քաշը՝ 6 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկություն ▪ խցիկներ: Մեկ խցիկ ▪ սարքավորումներ – դիզելով եռակցման ապարատ, գեներատոր աշխատանքային սեղան ▪ սարքավորումներ - էլեկտրական օդի կոմպրեսորներ , գործիքների հավաքածու, ստուգման սարք, և այլ չափման սարքեր , աշխատանքային սեղան

Թիրախավորելով ՀՀ-ի մայրաքաղաք Երևանը իրականացված «Երևան քաղաքում հրշեջ սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում (ստորագրված 2009թ. Հ/Փ)՝ հրշեջ մեքենաների գնման ժամանակ, ներդրվել են ծրագրային ապահովման փափուկ բաղադրիչներ: Սակայն, ներդրված ծրագրային ապահովման փափուկ բաղադրիչները նախատեսված են եղել հիմնականում Երևան քաղաքի հրշեջների համար, իսկ ներկայիս ծրագրի թիրախային մարզերի՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի հրշեջ ջոկատների աշխատողներին տեղի չի ունեցել տեխնոլոգիաների փոխանցում, բացառությամբ որոշ գործադիր պաշտոնյաների: Բացի այդ, քանի որ տվյալ նախագծի

շրջանակներում նախատեսված հրշեջ մեքենաների կառուցվածքը և գործարքումը էականորեն տարբերվում են Սովետական միության արտադրության հրշեջ մեքենաներից, ապա հրշեջ մեքենաների անվտանգ և արդյունավետ շահագործման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի մեքենաների գնման հետ միասին ներդրվեն ծրագրային ապահովման փափուկ բաղադրիչներ:

Առաջին հերթին, որպես ծրագրային ապահովման փափուկ բաղադրիչներ պետք է իրականացվեն հետևյալ դրույթները՝

- Սանդուղային մեքենաներով հրշեջ-փրկարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ ձեռնարկների և ուսումնական նյութերի վերանայում:
- Հրշեջ մեքենաների համար, ավտոսանդուղքի միջոցով իրականցնել արդյունավետ հրդեհաշիջման, փրկարարական աշխատանքների տեխնիկական ուղեցույց:

4. Նախագծի գնահատում

4.1 Արդիականություն

Տվյալ ծրագիրը՝ հրշեջ մեքենաների և սարքավորումների թարմացման շնորհիվ, կարող է աջակցել երկրի այնպիսի կարևորագույն խնդիրներին, ինչպիսին են բնական աղետների և հրդեհների կանխարգելումը, հրդեհներից մարդկանց կյանքի և ունեցվածքի պաշտպանումը, ինչպես նաև իրականցնել մարզերի ապահովությունը և անվտանգությունը՝ իր հերթին նպաստելով սոցիալական և տնտեսական զարգացմանը: Հետևաբար, աղետներից առաջացած վնասների տարածումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է դրանց դեմ արագ արձագանք, ինչպես նաև մարդկային տեսանկյունից, արձագանքել դրանց հետևանքով առաջացած նրանց արժանապատվության, կյանքի, կենցաղի նկատմամբ սպառնալիքների դեմ: Բացի այդ, ՀՀ-ի կառավարությունը 2012թ.-ին սահմանել է «Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություն», որտեղ նշվում է, որ ազգի կայուն զարգացման համար աղետների կանխարգելման միջոցառումների ծրագրի ստեղծումը հանդիսանում է կարևորագույն խնդիր: Դրա հետ մեկտեղ, ըստ ֆինանսների նախարարության կողմից սահմանված «Միջնաժամկետ ծախսերի ծրագրերի» (2014-2016), արտակարգ իրավիճակներում հրշեջ-փրկարարական ծառայությունների կարողությունների բարելավումը հանդիսանում է կարևորագույն խնդիր և համապատասխանում է ներկայիս ծրագրի քաղաքականության հետ: Աղետների, ներառյալ հրդեհների կանխարգելման տեսանկյունից ՀՀ-ի կառավառությունը կարևորում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքը, որը հանդիսանում է երկրի 2-րդ խոշոր քաղաքը և որտեղ վերջին տարներին ուրբանիզացիայի արդյունքում հրդեհների թիվը աճել է:

Մյուս կողմից հրշեջ-փրկարարական ծառայությունների մեքենաները հնացել են՝ շարժիչները, արգելակները, հիդրավլիկ սարքերը և այլն ունեն ֆունկցիանալ դեֆեկտներ, ինչի արդյունքում արագ հրդեհի մարում տեղի չի ունենում, որն էլ հանգեցնում է վնասման տարածման:

Տվյալ ծրագրի միջոցով՝ բարելավելով հրշեջ մեքենաները և սարքավորումները, հնարավոր կլինի իրականացնել արագ և անվտանգ հրշեջ փրկարարական ծառայություններ, փրկել բնակիչների կյանքը, ունեցվածքը և այլն, ապահովել մարզերի ապահովությունը և անվտանգությունը և ի վերջո նպաստել տնտեսական և սոցիալական զարգացմանը:

Այդ իսկ պատճառով տվյալ ծրագրը ունի բարձր աստիճանի արդիականույթուն:

4.2 Արդյունավետություն

4.2.1 Որակական արդյունք

Սույն ծրագրի որակական արդյունքները ցույց են տրված աղյուսակ 6-2 ում

Արդյունավետության աղյուսակ

Ցուցանիշներ	Ներկայիս հնարավորություն (2016 փաստացի վիճակը)	Նպատակային հնարավորություն (2022թ) (ծրագրի ավարտից 3 տարի անց)
Հերթապահի իրազեկելուց հետո հրշեջ մեքենայի դուրս գալու պատրաստման մոտավոր ժամանակը (րոպե)	10 րոպեից ավել	1 րոպեից պակաս
Հերթապահի իրազեկումից հետո հրշեջ մեքենայի հնարավոր մեկնումը 1րոպեի ընթացքում: Համեմատությունը (%)	0%	100%
Հրդեհի վայր ժամանելուց հետո անհրաժեշտ միջին ժամանակը մինչև ջուր տալը (րոպե)	5 րոպեից ավել	Մինչ 5 րոպե

Այս ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնիկայի արդյունքում ցուցանիշների նման փոփոխություն տեղի կունենա:

4.2.2 Որակական արդյունք

Ստորև նշված է սույն ծրագրի որակական արդյունքները

- Անվտանգ, արդյունավետ և որակյալ հրշեջ գործունեություն
- Հրդեհաշիջման մակարդակի բարելավման շնորհիվ, ապահովել տվյալ մարզերի բնակչության անվտանգությունն ու ապահովությունը

Բովանդակություն

Նախաբան
Ամփոփագիր
Բովանդակություն
Տեղանքները քարտեզի վրա
Գնվող սարքավորումների նկարներ
Գծապատկերներների ցանկ
Հապավումներ

Էջը

1. Նախագծի նախադրյալները և պատմությունը 1

1.1 Դրամաշնորհային օգնության նախադրյալները, պատմությունը և ակնարկը 1

1.2 Բնության պահպանության պայմանների վերաբերյալ պայմանավորվածություն 2
1.2.1 Ամբողջ Հայաստանը 2
1.2.2 Շիրակի մարզ 4
1.2.3 Լոռու մարզ 4
1.2.4 Սյունիքի մարզ 5

1.3 Շրջակա միջավայրի և հասարակության հետ կապը 6

2. Ծրագրի բովանդակությունը 7

2.1 Ծրագրի ակնարկ 7
2.1.1 Ծրագրի ընդհանուր խնդիրները և նպատակները 7
2.1.2 Նախագծի ակնարկ 8

2.2 Համագործակցության ամփոփագիր 8
2.2.1 Քաղաքականության նախագիծ 8
2.2.2 Հիմնական նախագիծ (Մեքենաների նախագիծ) 12
2.2.3 Ձեռք բերման նախագիծ 20

2.3 Գործընկեր երկրների համագործակցության ակնարկ 38
2.3.1 Բանկային գործողությունների կազմակերպում, վճարման լիազորագրի տրամադրում 38
2.3.2 Փոխշահավետ աջակցում 38
2.3.3 Հարկերից ազատում 38
2.3.4 Տեխնիկայի գրանցում 39
2.3.5 Դասընթացների ժամանակ վառելիքի, յուղի, հրդեհաշիջման աշխատանքներ կատարելու ծախսերը, ՓԾ-ի Ճանապարհածախսը, ... 39
2.3.6 Տեխնիկայի տեղափոխում յուրաքանչյուր հրշեջ ջոկատ 39
2.3.7 Անվտանգ և ապահով կայանատեղի ապահովում 39

2.3.8 Տեխնիկայի համապատասխան տեխնիկական սպասարկում և շահագործում 39
2.3.9 Նախագծի մոնիտորինգի հաշվետվություն 39
2.3.10 Այլ դրույթներ 39

2.4 Նախագծի կառավարում/տեխնիկական սպասարկում 39

2.5 Նախագծի մոտավոր ծախսերը 41
2.5.1 Նախագծի համատեղ ծախսերը 41
2.5.2 Շահագործման և տեխսպասարկման ծախսեր 41

3. ծրագրի գնահատում 47

3.1 ծրագրի իրականացման նախադրյալներ 47

3.2 Ծրագրի վերջնական նպատակների իրագործման համար գործընկերոջ կողմի (ծանրաբեռնվածություն) խնդիրները 47

3.3 Արտաքին պայմանները 47

3.4 Ծրագրի գնահատում 48
3.4.1 Իրականացում 48
3.4.2 Արդյունավետություն 49

Հավելված
1. Հետազոտող խմբերի անդամների անուններ
2. Հետազոտման ընթացքը
3. Շահագրգիռ անձանց (հարցման մասնակիցների) ցուցակ
4. Քննարկման արձանագրություններ (Ք/Ա)
5. Բաղադրիչ նախագծի ծրագրային ապահովում
6. Տեղեկատու նյութեր

Հայաստանի Հանրապետություն

Մայրաքաղաք՝ Երևան
Բնակչություն՝ 3,100,000
Տարածքը: 29,800քկմ
Լեզու՝ Հայերեն
Էթնիկ խմբերը՝
Հայ (97.9%) Ռուս (0.5%)
Ասորի (0.1%) Այլ (1.5%)

Կրոն՝ Քրիստոնեություն
ՀՆԱ: 11միլիարդ դոլար
(2014թ. տվ.)
ՀՆԱ մեկ շնչի հաշվով: 3,255.1դոլար
(2014թ. տվ.)

Նկ. Հայաստանի ողջ տարածքը



Նկ. Շիրակի մարզ, հրշեջ ջոկատները և վայրերը



Ադ. Հրշեջ ջոկատներ

Նկ. Լոռու մարզ, հրշեջ ջոկատները և վայրերը

Մարզ	Հրշեջ	Ջոկատին պատկանող տարածքը
Շիրակի մարզ	No.48	Գյումրի+12 շրջան
	No.49	Արթիկ+23 շրջան
	No.50	Ամասիա+19 շրջան
	No.51	Մարալիկ+16 շրջան
	No.52	Աշոցք+26 շրջան
	No.53	Ախուրյան+23 շրջան
Լոռու մարզ	No.37	Վանաձոր(արևելք)+4 շրջան
	No.38	Վանաձոր(արևմուտք)+6 շրջան
	No.39	Գուգարք+12 շրջան
	No.40	Ալավերդի+31 շրջան
	No.41	Ստեփանավան+18 շրջան
	No.42	Սպիտակ+20 շրջան
	No.43	Տաշիր+19 շրջան
Սյունիքի մարզ	No.54	Կապան+32 շրջան
	No.55	Գորիս+24 շրջան
	No.56	Մեղրի+15 շրջան
	No.57	Սիսիան+34 շրջան
	No.58	Քաջարան+19 շրջան

Նկ. Սյունիքի մարզ, հրշեջ ջոկատները և վայրերը

Տեղանքները քարտեզի վրա

1. Հրշեջ մեքենա (ջրի բաքով)

2. Ավտոսանդուղք(ծնկավոր կամ շարժական տեսակ)

ծնկավոր սանդուղք

շարժական ամբարձիչ

3. Շարժական տեխսպասարկման մեքենա

Այս նախագծի շրջանակներում տեխնիկան հագեցված չէ ուսանկարում պատկերված ամբարձիչով

Ձեռքբեռվող մեքենաների նկարներ

Գծապատկերների, աղյուսակների, նկարների ցանկ

■ Գծապատկերների համարաներ

Գծապատկեր 1-1 Թիրախային մարզերի ռելեֆը 3
Գծապատկեր 1-2 Երևանի տեղումները և ջերմաստիճանը 3
Գծապատկեր 1-3 Շիրակի մարզի (Գյումրի) տեղումները և ջերմաստիճանը 4
Գծապատկեր 1-4 Լոռու մարզի (Վանաձոր) տեղումները և ջերմաստիճանը 5
Գծապատկեր 1-5 Սյունիքի մարզի (Կապան) տեղումները և ջերմաստիճանը 6
Գծապատկեր 2-1 Փոխհարաբերությունների սխեմա 20
Գծապատկեր 2-2 Ներքին փոխադրումների երթուղին՝ վերջնական նշանակման կետը Վրաստանի «Փոթի» նավահանգստում 28
Գծապատկեր 2-3 ՓԾ-ի գլխավոր շտաբի և տեղամասի մինջև դիրքային կապը 31
Գծապատկեր 2-4 ՓԾ-ի տեղամասի (սարքավորումների տեղակայման վայր) օդային լուսանկար 31
Գծապատկեր 2-5 ՓԾ-ի տեղամաս (սարքավորումների տեղակայման վայր) 32
Գծապատկեր 2-6 Ավտոսանդուղքների վարման ուսուցողական հնարավոր տեղամասերի տեղակայման քարտեզ 33

■ Աղյուսակների համարաներ

Աղյուսակ 1-1 Անհրաժեշտսարքավորումներևտեղակայման վայրեր 2
Աղյուսակ 2-1 ՓԾ -ի բազայի վերանորոգող անձնակազմը 10
Աղյուսակ 2-2 ձեռք բերվող տեխնիկայի տեղաբաշխում 14
Աղյուսակ 2-3 Հիմնական փոխարինվող եւ սպառվող մասերի 18
Աղյուսակ 2-4 Տեխնիկական առանձնահատկություններ աղյուսակ 19
Աղյուսակ 2-5 Երկու երկրների կառավարության պարտականությունների բաժանումը 23
Աղյուսակ 2-6 Գնվող տեխնիկայի դասակարգում 26
Աղյուսակ 2-7 Տրանսպորտային երթուղիներ 27
Աղյուսակ 2-8 Իրագործման ընթացքի աղյուսակ 38
Աղյուսակ 2-9 Փրկարար ծառայության սարքավորումների տեխնիկական սպասարկման, վառելիքի յուղի ծախսերի նախահաշիվ /2011-2016 թթ./ 40
Աղյուսակ 2-10 Հայկական կողմի ծախսերը 41
Աղյուսակ 3-1 Արտաքին պայմանները 48
Աղյուսակ 3-2 Արդյունավետություն 49

■ Լուս համարաներ

Լուս 2-1 Վրաստանի Փոթի նավահանգիստը 29
Լուս 2-2 Վրաստանի ճանապարհային պայմանները 29
Լուս 2-3 ՓԾ-ի տեղամասի տարածքները (սարքավորումների տեղակայման վայր) 30
Լուս 2-4 Ավտոսանդուղքների վարման ուսուցողական տեղամաս 33

Հապավումներ

Միջազգային կազմակերպություններ · Պետական մարմիններ · Դոնոր կազմակերպություններ · Զարգացման ծրագիր · Օրենսդրություն	
ՀՀՓԾ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն
ՀՀՓԾԿ	ՀՀ փրկարար ծառայության կանոնադրություն
ՃԿԿ	Ճգնաժամային Կառավարման Կենտրոն
ՃԿՊԱ	Ճգնաժամային Կառավարման Պետական Ակադեմիա
ՀՓՋ	Հրշեջ փրկարարական ջոկատ
GIZ	Գերմանական միջազգային համագործակցության գործակալություն
JICA	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը
ԱԻՆ	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԱՌՆԱՌ	Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություն
ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ՄԳՀԳ	Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ
ԱՀՌՓ	Աղքատության հաղթահարման ռազմավարության փաստաթուղթ
ՓԾ	Փրկարար ծառայություն
ՔՊԿ	Քաղաքաշինության պետական կոմիտե
SDC	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
UNDP	ՄԱԿ-Ի Զարգացման Ծրագիր
Վարչական միավոր	
Մարզ	
Միավորի խորհրդանիշ	
լ	լիտր
մ/վրկ	1մետր վարկյանում
Այուսները	
ՀՀԴ	Հայկական դրամ
Վ/Թ	Վճարման թույլտվություն
Հ/Փ	Հայտագրերի փոխանակում
Դ/Հ	Դրամաշնորհային համաձայնագիր
Ք/Ա	Քննարկման արձանագրություններ

1. Նախագծի նախադրյալները և պատմությունը

1.1 Դրամաշնորհային օգնության նախադրյալները, պատմությունը և ակնարկը

Հայաստանի հանրապետությունը (ՀՀ), որպես ազգային նպատակ՝ համաձայն «աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության», որոշել է զարգացնել հրդեհաշիջման և աղետների կանխարգելման ոլորտները մարզերում: Սակայն քանի որ ՀՀ-ն գտնվում է ծանր ֆինանասական վիճակում, ապա փրկարարական ծառայության իրավասության տակ (ՓԾ) գտնվող հնացած հրշեջ տրանսպորտի թարմացում չի իրականացվել: Հրշեջ ջոկատներում անհնար է պատշաճ մակարդակով իրականացնել հրշեջ մեքենաների թարմացումը: Այդ իսկ պատճառով՝ հրշեջ-փրկարարական աշխատանքները, աղետների և հրդեհների պայմաններում, բավարար մակարդակով չեն իրականացվում: Հատկապես Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում, որտեղ գտնվում են Երևանից հետո 2-4-րդ մեծությամբ քաղաքները, առկա են այնպիսի խնդիրներ, ինչպիսինն են հնացած հրշեջ տրանսպորտը և այլն, ինչը բնակչության աճմանը զուգահեռ ավելի ակնհայտ է դարձել:

Տվյալ իրանիճակը բարելավելու համար, ինչպես նաև Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում հրշեջ տրանսպորտը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը հայցեց դրամաշնորհային օգնություն Ճապոնիայից:

Տվյալ ծրագրը՝ բարելավելով Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի ՓԾ-ի իրավասության տակ գտնվեղ հրշեջ տրանսպորտը, նպատակ ունի զարգացնել փրկարարական ծառայությունները, փրկել բնակիչների կյանքը, ունեցվածքը և այլն, նպաստել մարզերի ապահովությանը և անվտանգությանը:

Տվյալ հետազոտությունները հաստատում են հարցման անհրաժեշտությունը և արդիականությունը, բացի այդ դրանց միջոցով կազմվել են դրամաշնորհային ծրագրին համապատասխան սխեմատիկ նախագիծ, բիզնես պլան (ձեռք բերվող սարքավորումների քանակությունը, առաձնահատկությունները և այլն), սարքավորումների տեխնիկական սպասարկման պլան, ինչը իրականացվել է ծրագրի ինտեգրված ծախսերի հաշվարկման նպատակով: Ըստ հետևյալ հետազոտության անհրաժեշտ և հաստատված սարքավորումները և նրանց տեղակայման վայրերը ներկայացված են աղ. 1-1-ում:

Աղյուսակ 1-1 Անհրաժեշտսարքավորումներևտեղակայման վայրեր

No.	տեղակայման նպատակակետը	մարզ	տեխնիկայի քանակը	
			հրշեջ մեքենա	Ավտո սանդուղք
1	No.37 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	1
2	No.38 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	---
3	No.39 ջոկատ (Գուգարք)	Լոռի	2	---
4	No.40 ջոկատ (Ալավերդի)	Լոռի	2	---
5	No.41 ջոկատ (Ստեփանավան)	Լոռի	2	---
6	No.42 ջոկատ (Սպիտակ)	Լոռի	2	---
7	No.43 ջոկատ (Տաշիր)	Լոռի	2	---
8	No.48 ջոկատ (Գյումրի)	Շիրակ	2	1
9	No.49 ջոկատ (Արթիկ)	Շիրակ	2	---
10	No.50 ջոկատ (Ամասյա)	Շիրակ	2	---
11	No.51 ջոկատ (Մարալիկ)	Շիրակ	2	---
12	No.52 ջոկատ (Աշոցք)	Շիրակ	2	---
13	No.53 ջոկատ (Ախուրյան)	Շիրակ	2	---
14	No.54 ջոկատ (Կապան)	Սյունիք	2	1
15	No.55 ջոկատ (Գորիս)	Սյունիք	2	---
16	No.56 ջոկատ (Մեղրի)	Սյունիք	2	---
17	No.57 ջոկատ (Սիսյան)	Սյունիք	2	---
18	No.58 ջոկատ (Քաջարան)	Սյունիք	2	---
ընդհանուր			36	3

1.2 Բնության պահպանության պայմանների վերաբերյալ պայմանավորվածություն

1.2.1 Ամբողջ Հայաստանը

Հայաստան երկիրի տարածքը մոտ 29,800 քկմ մակերես / մոտավորապես Ճապոնիայի 1-13 րդ մասը/ ,գտնվում է Սև ծովից հարավ, Կասպից ծովից արևմուք ընկած Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածում, հյուսիսում Փոքր Կովկասյան լեռնաշղթան է, իսկ արևմուտքում Հայկական լեռնաշղթան է : Հարթավայրերը քիչ են, երկրի 90 % լեռնային է 1,000-3,000 մ ծովի մակերևույթից բարձր , 3,000 մ բարձր սարերն էլ բավականին շատ են: Ամենաբարձր կետը Արագածն է , որի բարձրությունն է 4,090 մ., ամենացածր կետը՝ հյուսիսում հոսող Դեբետ գետն է 380 մ ծովի մակերևույթից բարձր: Մայրաքաղաք Երևանը, երկրի ամենամեծ հարթավայրում գտնվող Արարատյան դաշտավայրը հարուստ է բերքատու հողերով: Արարատյան դաշտավայրը – ծովի մակերևույթից բարձր է 800մ, իր

անվան պես տեսարան է բացվում դեպի Արարատ Լեռ (5,165մ., Թուրքիայում է), գտնվում է Թուրքիայի սահմանին հոսող Արաքս գետի ձախ ափին:

Կլիման ցածրադիր գոտիներում մեղմ կլիմա է,իսկ բարձրադիր գոտիներում սառը և խոնավ, բարձրադիր գոտիներում համեմատած անձրևների քանակը շատ է: Տարեկան տեղումների քանակը տարբեր են լինում ՝ կախված շրջաններից , մինչև 200-900 մմ: Ձմռանը նվազագույն ջերմաստիճանը -40°C է , ամռանը առավելագույն ջերմաստիճանը երբեմն հասնում է ավելի քան 40°C -ի, ըստ եղանակների ջերմաստիճանի տարբերությունը բավականին մեծ է:

Ձմռանը ձյան տեղումները հասնում է մինչև 1-2մ:



Աղբյուրը՝ տոպոգրաֆիկ քարտեզի հիման վրա հետազոտողներ

Գծապատկեր 1-1 Թիրախային մարզերի ռելեֆը



Աղբյուրը՝ մետեորոլոգիական տվյալների հիման վրա հետազոտողներ

Գծապատկեր 1-2 Երևանի տեղումները և ջերմաստիճանը

1.2.2 Շիրակի մարզ

Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արեւմտյան մասում, մարզկենտրոնը՝ Գյումրի քաղաքը(Գյումրի): Տարածքը 2,681 քկմ (երկրի 9% - ը) . Հյուսիսում սահմանակից է Վրաստանին, որտեղով անցնում է միջազգային մայրուղին (M1): Իսկ արևմուտքում սահմանակից է Թուրքիային, բայց սահմանը փակ է, և միջազգային մայրուղին (M7) ներկայումս անանցանելի է(10/2016):

Աշխարհագրական դիրքը՝ հյուսիսում գտնվում է Աշոցքի սարահարթը(1,900-2,100մ), կենտրոնական և հարավային մասում Շիրակի դաշտավայրը(1,400-1,800 մ): Շիրակի դաշտավայրը հյուսիսից, հարավից և արևելքից շրջապատված է լեռներով:

Կլիման ձմռանը խիստ ցուրտ է, առատ ձյուն է տեղում, իսկ ամռան ամիսներին՝ մեղմ: Տարեկան միջին տեղումների քանակը 500 մմ է. քամու միջին արագությունը կազմում է մոտ 2.5 մ / վ, ամռանը՝ 4.0 մ / վ , ձմռանը՝ 1.0 մ / վ : Շիրակի մարզում շատ են խոտածածկ հատվածները, իսկ հողը չոր տորֆային է, ամռան ամիսներին կլիմայական չոր պայմաններում, և բարձր ջերմաստիճանի դեպքում հողի չոր տորֆը հրդեհների պատճառ է հանդիսանում, որն էլ արագ տարածվում է, այս տարածքում հաճախ անհրաժեշտ է լինում զանգվածային հրդեհաշիջում կատարել:

1988թ. Երկրաշարժի ժամանակ Գյումրի քաղաքում շատ մարդիկ են զոհվել, ոմանք էլ կորցրել են իրենց բնակարանները:



Աղբյուրը՝ տոպոգրաֆիկ քարտեզի հիման վրա հետազոտողներ:

Գծապատկեր 1-3 Շիրակի մարզի (Գյումրի) տեղումները և ջերմաստիճանը

1.2.3 Լոռու մարզ

Լոռու մարզը գտնվում է Հայաստան երկրի հյուսիսային մասում , մարզկենտրոնը՝ Վանաձոր (Կիրովական) : Տարածքը 3,789 քկմ (երկրի 12.7% - ը,): Հյուսիսային մասում սահմանակից է Վրաստանին, այստեղով է անցնում միջազգային մայրուղիները (M3, M6), :

Այս տարածքը ծովի մակերևույթից բարձր է Դեբետ գետ 380մ մինչև 3,196 մ Աչքասար լեռը: Այնտեղով է հոսում երկրի խոշոր գետերից Դեբետ գետը, Ձորագետը, Փամբակ գետերը: Կլիման ձմռանը խիստ ցուրտ է , ամռանը՝ զով: Տարեկան միջին տեղումների քանակը 500-600 մմ է: Քամու միջին արագությունը տարեկան մոտ 2.5 մ / վ, ամռանը `

2.0 մ / վ, ձմռանը 3.5 մ / վ:

1988թ դեկտեմբերի 7-ին տեղի է ունեցել Սպիտակի երկրաշարժը, էպիկենտրոնը Սպիտակ քաղաքը: Երկրաշարժից զոհվել են ավելի քան 25,000 մարդ, անտուն են մնացել 500,000 մարդ, քանդվել են բարձրահարկ շենքեր(9 հարկանի) թե Սպիտակ և թե Վանաձոր քաղաքներում: Երկրաշարժից հետո անտուն մնացած մարդկանց բնակեցնելու նպատակով կառուցվել են փայտյա տներ, քանի որ այն ավելի արագ կլիներ, քան քարե շենքերը:



Աղբյուրը՝ տոպոգրաֆիկ քարտեզի հիման վրա հետազոտողներ:

Գծապատկեր 1-4 Լոռու մարզի (Վանաձոր) տեղումները և ջերմաստիճանը

1.2.4 Սյունիքի մարզ

Սյունիքը գտնվում է Հայաստան երկրի հարավային մասում, մարզկենտրոնը Կապան քաղաքը: Տարածքը 4,506 քկմ է (կազմում է երկրի 15%-ը): Արևմյան և արևելյան կողմերով սահմանակից է Ադրբեջանին, իսկ հարավից՝ Իրանին: Այն շրջապատված է Զանգեզուրի լեռնաշղթայով, ամենաբարձր գագաթը Կապուտջուղ է 3,905 մ, ամենացածր կետը՝ Արաքս գետը 380 մ ծովի մակարդակից բարձր: բավականին մեծ է բարձրությունների տարբերությունը:

Արաքս գետը հարավային կողմից սահմանակից է Իրանի, նրա վտակներն են Որոտան և Ողջին գետերը: Ջերմաստիճանն ամռանը ցածրադիր գոտիներում հասնում է ավելի քան 40°C, իսկ լեռնային գոտիներում շուրջ 20°C : Ձմռանը լեռնային գոտիներում ջերմաստիճանը իջնում է մինչև -30°C : Քամու միջին արագությունը տարեկան կազմում է մոտ 1.7 մ / վ, ամառվա ընթացքում1.2 մ / վ., իսկ ձմռան ամիսներին 2,4 մ / վ :



Աղբյուրը՝ տոպոգրաֆիկ քարտեզի հիման վրա հետազոտողներ:

Գծապատկեր 1-5 Սյունիքի մարզի (Կապան) տեղումները և ջերմաստիճանը

1.3 Շրջակա միջավայրի և հասարակության հետ կապը

Հիմք ընդունելով էկոլոգիական և սոցիալական նկատառումների ուղեցույցը՝ տվյալ ծրագրին JICA-ի կողմից տրվել է էկոլոգիական և սոցիալական նկատառումների «C» աստիճան, քանի որ այն ունի միջավայրի վրա մինիմալ անցանկալի ազդեցություն:

2. Ծրագրի բովանդակությունը

2.1 Ծրագրի ակնարկ

2.1.1 Ծրագրի ընդհանուր խնդիրները և նպատակները

Այս ծրագրի գլխավոր նպատակը հանդիսանում է «աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությունը», ըստ որի ստորև բերված են ծրագրի խնդիրները.

- Աղետների ռիսկի նվազեցման նպատակով զարգացնել կազմակերպչական կարողություններ ազգային և տարածաշրջանային մակարդակով
- Աղետների ռիսկի քանակական գնահատումը և մանիտորինգը, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման նպատակով հրատապ արձանագրման համակարգերի ամրապնդումը
- Աղետների նկատմամբ արձագանքների կարողությունը ամրապնդելու համար՝ երկրի բոլոր կազմակերպչական մակարդակներում իրականացնել աղետների կանխարգելման դասընթացներ և գործողություններ
- Արտակարգ իրավիճակների էֆեկտիվ մոնիտորինգի և կարգավորման, ինչպես նաև աղետների վերականգնման արդյունավետ համակարգի կառուցման նպատակով՝ իրականացնել համագործակցություն կենտրոնական և տարածաշրջանային ադմինիստրատիվ կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների հետ:
- Երկրի տարածքային ամբողջականության պահպանման համար՝ հետևել աղետների ռիսկի համապարփակ նվազեցման ոլորտի օրենքներին և կանոնակարգերին:

Նշված նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությունը ներմուծել է դրանք բազային քաղաքականության պետական բյուջեի «Միջնաժամկետ ծախսերի ծրագրի» մեջ, որտեղ հրշեջ-փրկարարական աշխատանքները բարելավելու համար առկա են հետևյալ դիրքորոշումները և ուղեցույցները

- Նվազեցնել աղետների ռիսկը, պաշտպանել քաղաքացիներին և երկրի տարածքը արտակարգ իրավիճակներից:
- Մայրաքաղաքում և 10 մարզերում առկա հրշեջ-փրկարարական ջոկատների կարողությունների բարելավում:
- ՀՀ-ի ամբողջ տարածքով կապի և ազդարարման համակարգերի բարելավում և ընդլայնում
- ՓԾ-ի աշխատակիցներիհմտությունների աստիճանաբար բարելավում:

Տվյալ նախագիծը համահունչ է վերոհիշյալ քաղաքականության հետ, որի շնորհիվ ՀՀ-ի կարևոր մարզերում՝ Շիրակ, Լոռի, Սյունիք, կթարմացվեն տեղակայված հնացած հրշեջ տրանսպորտը՝ բարելավելով հրշեջ-փրկարարական համակարգը, ինչը թույլ կտա փրկել թիրախային մարզերի բնակիչների կյանքը, ունեցվածքը, ապահովել դրանց ապահովությունը և անվտանգությունը:

2.1.2 Նախագծի ակնարկ

Տվյալ նախագիծը՝ վերոհիշյալ նպատակներին հասնելու համար՝ հինք ընդունելով Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում առակա պայմաններին, մտադիր է զարգացնել տեղակայված հրշեջ մեքենաները, ինչպես նաև իրականացնել հրդեհաշիջման համակարգերի տեխնիկական սպասարկում: Սպասվում է, որ թիրախային մարզերում հրշեջ-փրկարարական համակարգերը կունենան կայուն հուսալիություն:

Դրանց հետ մեկտեղ, համագործակցության ծրագիրը նպատակադրված է ձեռք բերել և տեղակայել 3,500լ տարողությամբ 36 հրշեջ մեքենա և 3 ավտոսանդուղք՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի 18 հրշեջ ջոկատների համար: Բացի նշված մեքենաների տեղակայմանը, անհրաժեշտ է ձեռք բերել 1 շարժական տեխսպասարկման մեքենա՝ համալրված վերանորոգման սարքավորումներով, որը կտեղակայվի Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայանում, հետագայում ձեռք բերված սարքավորումների պատշաճ վերանորոգման և կարգավորման աշխատանքների նպատակով: Նպատակադրված է նաև, ներդնել ծրագրային ապահովման բաղադրիչներ, որոնք կաջակցեն հրշեջ-փրկարարական աշխատանքների ձեռնարկների, ինչպես նաև հրդեհաշիջման համակարգի արդյունավետ կառավարման տեխնոլոգիայի տեխնիկական ուղեցույցի պատրաստմանը:

2.2 Համագործակցության ամփոփագիր

2.2.1 Քաղաքականության նախագիծ

2.2.1.1 Հիմնական քաղաքականություն

ՀՀ-ի կողմից հայցման համաձայն նշվում են 36 հրշեջ մեքենաներ և 3 ավտոսանդուքներ:

Ներկայիս նախագծի սկզբում նախատեսված էր ներգրավել երկրի 60 հրշեջ ջոկատներ, սակայն Ճապոնիային հայտ ներկայացնելու ժամանակ՝ հաշվի առնելով մինչ հիմա Ճապոնիայի կողմից աջակցության ծավալը, սահմանվեցին առաջնահերթություններ և ծավալը կրճատվեց՝ հասցնվելով նվազագույնի, ինչը արդյունքում ներգրավեցին 3 մարզերի 18 հրշեջ ջոկատներ:

Բացի այդ, ըստ ՀՀ-ի Քաղաքաշինության Պետական Կոմիտեի (ՔՊԿ) քաղաքային պլանավորման՝ որոշվել են հրշեջ ջոկատների և մեքենաների քանակությունը, ինչի արդյունքում նախատեսվել է տեղակայել սկզբունքային 2 հրշեջ մեքենա՝ յուրաքանչյուր հրշեջ ջոկատում: ինչպես նաև ըստ ՓԾ-ի քարտուղարի որոշման յուրաքանչյուր 3 և ավել հարկ ունեցող շենքերով իրավասությամբ տարածքներում պետք է տեղակայվեն առնվազն 1 ավտոսանդուքներ:

Ավելին, ըստ «Հայաստանի հանրապետության հրդեհաշիջման մասին օրենքների (4),

հրդեհաշիջման մարտավարության, հակահրդեհային գործողությունների ստանդարտների» ՀՀ-ի հրշեջ-փրկարարական աշխատանքները ունեն հետևյալ առաձնահատկությունները:

- Հրշեջ մեքենաների ուղարկման դեպքում յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ուղրկվեն հիմնականում 2 մեքենա:
- Փոքրամաշտաբ հրդեհների դեպքում, հրդեաշիջման ջրի մատակարարման ապահովման համար՝ 2 հրշեջ մեքենան միաժամանակ պետք է իրականացնեն ջրամղման և հրդեհաշիջման աշխատանքներ:
- Միջին մաշտաբի հրդեհների դեպքում հրդեհաշիջման համար մեքենաներից մեկը պետք է իրականացնի ջրմղմամբ հրդեհաշիջում, իսկ մյուս մեքենան՝ որպես հերթափոխող, պետք է ծառայի ջրամատակարարման ռեզերվուար:

Հիմնվելով այս ամենի վրա՝ իրականացվեցին տեղակայվող հրշեջ մեքենաների քանակի և անհրաժեշտության գնահատում, ստուգվեցին գոյություն ունեցող հրշեջ մեքենաների կարգավիճակը, որոնք հաստատվեցին ըստ ՀՀ-ի հրդեհաշիջման դրույթների և ՓԾ-ի տեղակայման նախագծի հիման վրա:

Լայնամաշտաբ հրդեհների դեպքում, հրրդեհաշիջման աշխատանքները իրականացվում են տարածքի իրավասությունից դուրս հարևան հրշեջ ջոկատների օգնությամբ:

Հիմնվելով տվյալ հետազոտությունների վրա, մենք նախատեսում են յուրաքանչյուր 18 հրշեջ ջոկատի համար հատկացնել 2 հրշեջ մեքենա՝ ընդհանուր 36 մեքենա, իսկ յուրաքանչյուր մարզին՝ 1 ավտոսանդուղք՝ ընհանուր 3 մեքենա:

Չնայած նրան, որ ներկայումս ՓԾ-ն մարզերում ունի տեխնիկական սապսարկման և կառավարման շարժական տեխսպասարկման մեքենաներ, սակայն քանի որ պարզվեց, որ դրանք հնացած են, ապա ներկայիս նախագծով որոշվեց ձեռք բերել 1 շարժական տեխսպասարկման մեքենա՝ մարզերում տեխնիկական սպասարկման և կառավարման համակարգերը ամրապնդելու համար (տեղակայման վայրը Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայան):

Սարքավորումների առաձնահատկությունները որոշեվել են հիմք ընդունվելով «Երևան քաղաքի հրշեջ տեխնիկայի և սարքավորումների համալրման նախագծը», սակայն ներկայիս նախագծի դեպքում դրանց առաձնահատկությունները հարկավոր է որոշել ըստ թիրախային մարզերի բնական պայմանների՝ համեմատելով դրանք Երևանի հետ:

2.2.1.2 Բնության պահպնության քաղաքականություն

Ինչպես նշված է «բնական պայմանների վերաբերյալ 1.2» գլխում, ներկայիս ծրագրի Շիրակ, Լոռի, Սյունիք թիրախային մարզերում բնական ընդհանուր պայմանների վերաբերյալ դիտարկվել են հետևյալ 3 կետերը՝ «կտրուկ ռելիեֆ», «0°C-ից ցածր ջերմաստիճան ձմռանը», ինչպես նաև «առատ ձյան տեղումներ»: Հետևյալ բնական

պայմաններում, մենք նախագծել ենք այնպիսի հրշեջ սարքավորումներ, որոնցով հնարավոր է իրականացնել հրշեջ-փրկարարական աշխատանքներ:

2.2.1.3 Շահագործման ու տեխսպասարկման քաղաքականություն

ՓԾ-ում իրականացված ստուգումները ցույց տվեցին, որ հրշեջ մեքենաների և ավտոսանդուղքների տեղնիկական սպասարկումը և կառավարումը իրականացվում է յուրաքանչյուր փրկարարական ջոկատի ինժիներների (վարորդների) կողմից: Բազմակի ստուգումները և տեխնիկական սպասարկումները ցույց տվեցին, որ նրանք հնարավորության սահմաններում ունեն անհրաժեշտ ունակություններ՝ սպասարկելու և կառավարելու հրշեջ տրանսպորտը:

ՓԾ-ի տեխնիկական սպասարկման գործարանում առկա են մեքենայի, շարչի, զոդման, մեխանիկական մշակման, թիթեղյա մետաղների ներկման պրոֆեսիոնալ վարպետներ (աղ. 2-1), ինչի շնորհիվ իրականցվում են ընդհանուր մեքենաների տեխնիկական սպասրկում:

Մեքենաների սպասարկումը և կառավարումը իրականացնելու համար, շահագործման սկզբնական շրջանում, ՓԾ-ի տեխնիկական սպասարկման գործարանի անձնակազմի ուղորդման նպատակով՝ անհրաժեշտ է նախապատրաստել սարքավորումների օգտագործմանը և կառվարմանը վերաբերվող գրքեր, ինչպես, օրինակ՝ ուղեցույցեր:

Աղյուսակ 2-1 ՓԾ -ի բազայի վերանորոգող անձնակազմը

Ինժեներներ	քանակ
ինժեներ մեխանիկ	1
մեխանիկ	6
զոդող	1
խառատ	1
շարժիչ նորոգող	2
Էլեկտրատեխնիկ	2
Արծաթապատող մեխանիկ	1
Կոռնկավար	1
Ընդհանուր	15

Աղբյուր՝ նյութերը պատրաստված են ՓԾ-հետազոտական խմբի կողմից

2.2.1.4 Փոխարինվող և սպառվող մասերիի ձեռք բերման մասին քաղաքականություն

Հիմնականում, եթե արտադրողի կողմից 2 տարվա ընթացքում առաջարկվող մասերի փոխումը, պահեստամասերի և այլնի ձեռք բերումը կենտրոնացված լինի, կնպաստի մեքենաների շահագործման բարելավմանը: Մարզերի ուսումնասիրության ընթացքում «Երևան քաղաքի հրշեջ տեխնիկայի և սարքավորումների համալրման նախագծի» համաձայն ձեռք է բերվել նաև հրշեջ մեքենաների, ավտոսանդուղքների

պահեստամասերը, որոնք սուգելուց հետո, խորհրդատուների համար պարզ դարձավ, որ անհրաժեշտ է գումար հատկացնել տարբեր տեսակի ֆիլտրերի համար, որոնք հաճախակի փոխվում են: Բացի այդ, ի տարբերություն Երևան քաղաքի, այս երեք թիրախային տարածքները լեռնային են, հաճախակի արգելակու անհրաժեշտություն կառաջանա, հետևաբար անհրաժեշտ է գումար հատկացնել արգելակների պահեստամասերի համար:

2.2.1.5 Սարքավերումների դասակարգման վերաբերյալ քաղաքականությունը

Հետևյալ ծրագրի բիզնես ազդցության վերաբերյալ կայուն պատկերացում ստանալու համար՝ հարկավոր է, որպեսզի սարքավերումների դասակարգման քաղաքականությունը լինի հետևյալ կերպ

- Հրշեջ մեքենաների դեպքում, դրանք թիրախային մարզերում աղետների, այդ թվում նաև հրդեհների ժամանակ, պետք է ադապտացված լինեն ճանապարհային պայմաններին, տեղանքի ռելիեֆին և եղանակային պայմաններին, դրա հետ միասին անհրաժեշտ պայմաններ են համարվում գերազանց ճկունությունը, արագությունը, դյուրին շահագործում և տեխնիկական սպասարկումը:
- Ինչ վերաբերվում է ավտոսանդուղքներին՝ ունենալով ադապատացիա թիրախային տարածքներում, աղետների, ինչպես նաև հրդեհների ժամանակ, որպես անհրաժեշտ պայմաններ դրանք պետք է ունենան ոչ միայն գերազանց ճկունության և հուսալիություն, այլ նաև դյուրին լինեն շահագործման և տեխնիկական սպասարկման ժամանակ:
- Հաշվի առնելով ՓԾ-ի տեխնիկական սպասարկման մակարդակը, ձեռք բերված սարքավորումները ընտերվել են ոչ թե հաշվի առնելով նորագույն հատկանիշներով առաջատար տեխնոլոգիաները, այլ փորձարկված հուսալի սարքավորումները:
- Շարժական տեխսպասարկման մեքենայի դեպքում, որպես անհրաժեշտ է որ դրանք ունենան ոչ միայն գերազանց ճկունություն և հուսալիություն, այլ նաև դյուրին լինեն շահագործման և տեխնիկական սպասարկման ժամանակ:

2.2.1.6 Սարքավորումների հիմնական առաձնահատկությունները

Տվյալ նախագծի շրջանակներում ձեռք բերվող հրշեջ տրանսպորտային միջոցները ընտրվել են խուսափելով բարդ կառուցվածքով, առաջատար տեխնոլոգիաներով և տեխնիկական սպասարկմամբ բարձր ծախսատարություն ունեցող սարքավորումներից: Արդյունքում տրանսպորտային միջոցները ընտրվել են ըստ «Երևան քաղաքի հրշեջ տեխնիկայի և սարքավորումների համալրման նախագծի»:

Ինչ վերաբերվում է շարժական տեխսպասարկման մեքենային՝ այստեղ կտեղադրվեն մինիմալ անհրաժեշտության գործիքներ, որոնք անհրաշեժտ են սպասարկելու ձեռք բերվող մեքենաները և հաշվի առնելով անհարթ ճանապարհներին մեքենայի վազքը ՝

տրանսպորտային միջոցները պետք է լինեն լիաքարշակ:

2.2.1.7 Ձեռք բերման մեթոդը, արտադրման ժամանակացույցի քաղաքականություն

(1) Պատվերների բաժանման քաղաքականություն (լոտի բաժանում)

Սույն նախագծով նախատեսվում է ձեռք բերել հետևյալ 3 տեսակի տեխնիկա՝ հրշեջ մեքենա, ավտոսանդուղք, շարժական տեխսպասարկման մեքենա:

Ճապոնիայում կա երկու արտադրող կազմակերպություն, որոնք կարող են արտադրել հրշեջ մեքենա, ավտոսանդուղք, շարժական տեխսպասարկման մեքենա Ա երկրի համար: Որպեսզի կարողանան ապահովվի մրցունակությունը լոտը (մրցույթի հանված ապրանքը) չի բաժանվում :

(2) Արտադրման ժամանակացույցի քաղաքականություն

Հաշվի առնելով Ճապոնիայի գործարանների արտադրական հնարավորությունները՝ տվյալ նախագծում որոշված 39 տրանսպորտային միջոցների արտադրությունը կտևի 14ամիս: Ինչ վերաբերվում է դրանց փոխադրմանը, ապա այն կիրաանացվի արտադրման 14 ամսվա ընթացաքում ՝ 3 անգամ:

Քանի որ շարժական տեխսպասարկման մեքենեան միայն մեկ հատ է հետևաբար այն կփոխադրվի հրշեջ մեքենաների հետ:

Հետևաբար մշակվել է՝ 3 մասից բաղկացած տեղական գնումների և փոխադրման գրաֆիկին համապատասխան, վերահսկման նախագիծ:

2.2.1.8 Ձեռք բերման քաղաքականություն ըստ երկրների

Քանի որ «Երևան քաղաքի հրշեջ տեխնիկայի և սարքավորումների համալրման նախագծով» ձեռք է բերվել ճապոնական արտադրության հրշեջ մեքենաներ, հետևաբար ՓԾ ունի ավելի քան 5 տարի ճապոնական տեխնիկայի շահագործման ու տեխսպասարկման փորձ: Այդպիսով հրշեջները, վարորդները և մեխանիկները պրոֆեսիոնալ տիրապետում են ճապոնական արտադրության մեքենաների շահագործմանը: Բացի այդ սույն նախագծով ՓԾ-ը ցանկություն է հայտնել ձեռք բերել ճապոնական արտադրության տեխնիկա, քանի որ այն անխափան աշխատում, շահագործման և տեխսպասարկման ծախսերը հասնում է նվազագույնի: Վերոհիշյալի համաձայն նախատեսվում է ձեռք բերել ճապոնական արտադրության տեխնիկա:

2.2.2 Հիմնական նախագիծ (Մեքենաների նախագիծ)

2.2.2.1 Ընդհանուր նախագիծ

Ըստ «Հայաստանի հանրապետության հրդեհաշիջման մասին օրենքների», յուրաքանչուր մարզում պետք է տեղակայվեն 2 հրշեջ մեքենա, իսկ 3 և ավելի հարկ ունեցող շենքերով իրավասությամբ վայրերում՝ 1 ավտոսանդուղք:

Բացի այդ, Հայաստան երկրի երեք թիրախային մարզում՝ Շիրակի (6 Հրշեջ ջոկատ), Լոռու (7 Հրշեջ ջոկատ) և Սյունիքի (5 Հրշեջ ջոկատ) են գտնվում իրենց մեծությամբ 2-4-րդ համարվող քաղաքները: այդ տարածաշրջանների ընդհանուր հրշեջ ջոկատների թիվը կազմում է 18 , սպասարկվող տարածքների բնակչության քանակը կազմում է 360 000, 330

000, 160 000 մարդ: Այս երեք մարզերը ՓԾ-ի համար համարվում են կարևորագույն տարածքներ, հետևաբար անհրաժեշտ է բարձացնել ծառայության մակարդակը:

Բացի այդ, այս երեք մարզերն են ընտրվել հիմք ընդունելով ստորև նշված հանգամանքները.

- Տեղակայված հրշեջ մեքենաները և ավտոսանդուղքները ինտենսիվորեն հնացած են
- Հրշեջ ջոկատների միջև առավելագույն հեռավորությունը կազմում է ավելի քան 30կմ
- Սկսած 1991թ-ից հրշեջ մեքենաների թարմացում տեղի չի ունեցել (բացառությամբ №37, №48 և №54 հրշեջ կայանների)
- Այստեղ գտնվում են 80-150 միջին և բարձրահարգ շենքեր, որոնք ունեն ոչ միայն 3 հարկ, այլ նաև 6-9 հարկեր

Հաշվի առնելով այս նախնական ուսումնասիրությունների արդյունքները, նպատակ դնելով հրշեջ փրկարարարական ծառայությունները դարձնել արագ, արդյունավետ և անվտանգ, տվյալ մարզերի յուրաքանչյուր հրշեջ ջոկատ կհամալրվի 2 հրշեջ մեքենաներով (ընդհանուր 36 մեքենա), ինչպես նաև №37, №48 և №54 հրշեջ կայաններում պետք է տեղակայվեն ավտոսանդուղքներ: Բացի այդ այս սարքավորումների կարգավորման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ է 1 շարժական տեխսպասարկման մեքենա՝ համալրված վերանորոգման սարքավորումներով, որը կտեղակայվի Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայանում:

2.2.2.2 Տեխնիկայի պլան

(1) Տեխնիկայի քանակը

Ինչպես քննարկվեց «2.2.2.1 ընդհանուր նախագծում» նախատեսված է ձեռք բերել 36 հրշեջ մեքենա և 3 ավտոսանդուղք , ինչպես նաև 1 շարժական տեխսպասարկման մեքենա, տվյալ հրշեջ մեքենաների տեխնիկական սպասարկման համար: Գնումների քանակական և տեղակայման տվյալները ներկայացված են 2-2 աղյուսակում:

Աղյուսակ 2-2 ձեռք բերվող տեխնիկայի տեղաբաշխում

No	տեղակայման նպատակակետը	մարզ	տեխնիկայի քանակը		
			հրշեջ մեքենա	Ավտո սանդուղք	շարժական տեխսպասարկման մեքենա
1	No.37 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	1	---
2	No.38 ջոկատ (Վանաձոր)	Լոռի	2	---	---
3	No.39 ջոկատ (Գուգարք)	Լոռի	2	---	---
4	No.40 ջոկատ (Թումանյան)	Լոռի	2	---	---
5	No.41 ջոկատ (Ստեփանավան)	Լոռի	2	---	---
6	No.42 ջոկատ (Սպիտակ)	Լոռի	2	---	---
7	No.43 ջոկատ (Տաշիր)	Լոռի	2	---	---
8	No.48 ջոկատ (Գյումրի)	Շիրակ	2	1	---
9	No.49 ջոկատ (Արթիկ)	Շիրակ	2	---	---
10	No.50 ջոկատ (Ամասյա)	Շիրակ	2	---	---
11	No.51 ջոկատ (Անի)	Շիրակ	2	---	---
12	No.52 ջոկատ (Աշոցք)	Շիրակ	2	---	---
13	No.53 ջոկատ (Ախուրյան)	Շիրակ	2	---	---
14	No.54 ջոկատ (Կապան)	Սյունիք	2	1	---
15	No.55 ջոկատ (Գորիս)	Սյունիք	2	---	---
16	No.56 ջոկատ (Մեղրի)	Սյունիք	2	---	---
17	No.57 ջոկատ (Սիսյան)	Սյունիք	2	---	---
18	No.58 ջոկատ (Քաջարան)	Սյունիք	2	---	---
19	ՓԾ-ի բազա (Երևան)	Երևան	---	---	1
ընդհանուր			36	3	1

(2) Տեխնիկաների բնութագիր

1) Հրշեջ մեքենայի բնութագիրը

1) -1 կոշտ տեղանքային ճանապարհներով անցնելու անհրաժեշտություն

Բացի այն, որ «1.2 բնական պայմաններ» գլխում նշվել է, որ թիրախային Շիրակ, Լոռի և Սյունիք մարզերի փրկարարական ջոկատների իրավասության տակ առակա են կտրուկ ռելիեֆով, մեկընդմեջ ոչ ասվալտապատ ճանապարհներ: Ինչպես նաև երեք մարզերում ձմռանը ջերմաստիճանը միջինում կազմում է -10°C: Դրա հետ միասին, որոշակի տեղամասերում ձյան շերտի հաստությունը հասնում է մի քանի մետրի:

Քանի որ հրշեջ-փրկարարական աշխատանքները պետք է հարմարացվեն վերոհիշյալ

միջավայրային պայամաններին, անհրաժեշտ է, որպեսզի ընտրվեն այնպիսի հրշեջ մեքենաներ, որոնք անհարթ ճանապարհներին ունեն գերազանց վարողունակություն: Հատուկ քննական առաձնահատկությունները ներկայացված են ստորև.

- Վարելու համակարգը- 4x4 անիվներ կոշտ ճամապարհներ, ձյան կուտակումներ, բլուր բարձրանալու կարողություն
- Գետնից մեքենայի հիմքի բարձրությունը-այնքան բարձր որքան հնարավոր է, (վատ ճանապարհներ, ձյան կուտակումը)
- Տեխնիկայի քաշը- մեքենայի քաշի նվազեցում (բարելավելու սար բաձրանալու կարողությունն ու արագությունը)

1)-2 Հրշեջ մեքենայի ջրի բաքի տարողությունը

Ստորև նշված ուսումնասիրության արդյունքում որոշվեց 3,500լ տարողությամբ ջրի բաք .

- Հրդեհի վայրում, անհրաժեշտ է ունենալ բավականաչափ ջուր, որպեսզի թույլ չտալ կրակի տարածումը մինչև լրացուցիչ ջրի ստացումը

  ⇒ 2,000լ և ավելի տարողություն
- Հնարավորինս փոքրացնել ջրի բաքը, նպատակ ունենալով թեթևացնել մեքենայի քաշ բարձրացնելու նրա արագընթացությունը լեռնային տարածքներում

  ⇒ ամենամեծ 4,000լ տարողությամբ
- Շրջաններում սովորական կրակի բռնկման ժամանակ անհրաժեշտ է լինում ամենաքիչը 2,000լ ջուր մեկ մեքենայում հրդեհաշիջում իրականացնելու համար ըստ լսված տվյալների

  ⇒ 2,000լ և ավելի
- Ըստ հարմարավետության, այնքան էլ մեծ չէ տարբերությունը առկա մեքենաների բաքի հնարավորությունից / 2,000լ/

  ⇒մոտ 2,000լ

Տվյալ պայամաններում՝ հաշվի առնելով հրշեջ մեքենայի ընթացքային մասի վրա ընկնող ծանրությունը, և նրա վրա կրվող սարքավորումները (փրակարարական սարքավորումնորը և այլն), նպատակահարմար է տեղադրել 3500լ տարողությամբ ջրային բաք:

Այսպիսով հրշեջ մեքենայի ջրի տարողությունը 3500լ է:

1)-3 Հրշեջ մեքենան ցուրտ կլիմայական տարածքներում

Ինչպես նշված է «1.2 բնական պայմանները» այս երեք թիրախային շրջաններում՝ Շիրակը, Լոռին, Սյունիքը, տարեկան միջին ջերմաստիճանը ցածր է, առկա է ձյան տեղումներ, այսպիսով յուրաքանչյուր մասը պաշտպանված լինի սառելուց, որպեսզի շարժիչը կարողանա միանալ: Անհրաժեշտ է, որ մեքենաներն արտադրված լինի ցուրտ տարածաշրջանի համար: Հիմնական մասերի պետք է ունենան հետևյալ տեխնիկական առանձնահատկությունները, որոնք հետևյալն են.

- ջրի խողովակները սառեցումից պաշտպանություն (տաքացման համակարգի տեղադրում)
- մարտկոցի հզորության բարձրացում
- մետաղի պատշտպանություն ժանգոտվելուց (ճանապարհային մակերևույթի հակա-սառեցում)

2) Ավտոսանդուղքի առանձնահատկությունների ուսումնասիրություն

2)-1 Առավելագույն աշխատանքային բարձրություն

ՀՀ- ի հարցման հիման վրա ավտոսանդուղքի օգտագործման ժամանակ առավելագույն աշխատանքային բարձրությունը պետք է կազմի 30մ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել հրշեջ-փրկարարական աշխատանքներ միջինից բարձրահարկ շենքերում՝ առավելագույնը 9 հարկ բարձրությամբ: Ավտոսանդուղների համար ընտրվել է սանդուղքների ուղաձիգ տեսակը, որը գծային երկարեցվում է, և ճկվող տեսակը, որը ունի թեքվող բազուկ: Երկու համակարգն էլ առկա են Ճապոնիայի արտադրությունում, ինչպես նաև կան արտահանման տվյալներ: Չնայած նրան, որ ճկվող տեսակի աշխատանքային առավելագույն բարձրությունը կազմում է 25մ, հնարավոր են իրականացնել հրշեջ-փրկարարական աշխատանքներ միջինում 9 հարկանի շենքերում: Մինչ այժմ ՓԾ-ում տեղակայված և աշխատում են ուղիղ տեսակի սանդուղքներով ավտոսանդուղքներ, սակայն խորհրդակցության արդյունքները հաստատեցին, որ նույնիսկ ճկվող տեսակի մեքենաների (25m կարգ) շահագործումը դժվարություններ չի առաջացնի: Հետևաբար, այս նախագծի շրջանակներում ձեռք բերվող ավտոսանդուղքներում, որպես սանդուղքի առանձնահատկություններ՝ կհամադրվեն երկու տեսակի՝ ուղաձիգ և ճկվող սանդուղքներ:

2)-2 Ավտոսանդուղքի առանձնահատկությունները ցուրտ կլիմայական տարածքում

Ինչպես նշված է «1.2 բնական պայմանները» այս երեք թիրախային շրջաններում՝ Շիրակը, Լոռին, Սյունիքը, տարեկան միջին ջերմաստիճանը ցածր է, առկա է ձյան տեղումներ, այսպիսով յուրաքանչյուր մասը պաշտպանված լինի սառելուց, որպեսզի շարժիչը կարողանա միանալ: Անհրաժեշտ է, որ մեքենաներն արտադրված լինի ցուրտ տարածաշրջանի համար: Հիմնական մասերի պետք է ունենան հետևյալ տեխնիկական առանձնահատկությունները, որոնք հետևյալն են.

- մարտկոցի հզորության բարձրացում
- մետաղի պատշտպանություն ժանգոտվելուց (ճանապարհային մակերևույթի հակա-սառեցում)

2)-3 Այլ առանձնահատկություններ

Ավտոսանդուղքում նախատեսված է զամբյուղ, բարձր տարածքներում մարդկանց կյանքը փրկելու համար, ինչպես նաև ունի մոնիտոր կոշտ փողրակ/ջրցան/ և ջրի մատակարարման փողրակ /ոչ պոմպից/:

3) Շարժական տեխսպասարկման մեքենա

3)-1 մեքենայի կմախքը

Հաշվի առնելով թիրախային մարզերի ծանր բնական պայմանները՝ տրանսպորտային միջոցների քաշի նվազման նպատակով, որոշվել է մեքնաների թափքը պատրաստել ալյումինից: Բացի այդ մեքենաների վազքը բարելավելու համար դրանք պետք է ունենան համեմատաբար փոքր ընդհանուր քաշը՝ 6տոննա դասի, լինեն բարձր և լիաքարշակ:

3)-2 ներառված ապրանքները

Անհրաժեշտ սարքավորումնը պետք է լինեն պարզ և նվազագույն քանակության, ինչպիսին են մետաղյա թիթեղներ, նորոգման, զոդման ներկման և անվադողերը օդով լցնող գործիքներ, որոնցով հնարավոր է իրականացնել սովորական զննում, մասերի ապամոնտաժում և այլն:

(3) Սպառվող և փոխարինվող մասերի գնման նախագիծ

Համաձայն 2.2.1.4 Փոխարինվող և սպառվող մասերիի ձեռք բերման քաղաքականության ըստ ցույց է տրված աղյուսակ 2-3

Աղյուսակ 2-3 Հիմնական փոխարինվող եւ սպառվող մասերի

ապրանք		Քանակ
Փոխարինվող մասեր	Վառելիքի ֆիլտր	Արտադրողի կողմից առաջարկվում է կեսը
	Օդի ֆիլտր	Արտադրողի կողմից առաջարկվում է կեսը
	Շարժիչի յուղի ֆիլտր	Արտադրողի կողմից առաջարկվում է կեսը
	Հիդրավլիկ յուղի ֆլիտր	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Տարբեր փաթեթավորումներ	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Վառելիքի ինժեկտր	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Ապակու մաքրող խոզանակ	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Օդափոխիչի գոտի	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Կցորդման սկավառակ իսկեր	Արտադրողի կողմից առաջարկվում է կրկնակի քանակ
	Արգելակող համակարգի մասեր	Արտադրողի կողմից առաջարկվում է կրկնակի քանակ
	Տարբեր լամպեր, կապույրներ	Արտադրողի կողմից առաջարկվում է կրկնակի քանակ
	Ապահովիչ	Արտադրողի կողմից առաջարկվող քանակ
	Թափքի հետ կապ ունեցող պահեստամասեր	Փականներ, օղեր, արտադրողի կողմից առաջարկվում է
սպռովող մասեր	Լուսարձակների բլոկ блок фара	1 հավաքածու / լեռնային գոտիներում օգտագործելու դեպքում հնարավոր է վնասվել/
	Փողրակների վերանորոգման մասեր	Մեկ ամբողջական հավաքածու/ քանի որ հնարավոր է դաշտային պայմաններում օգտագործելու դեպքում փողրակները ծակվեն

2.2.2.3 Արտադրվող տեխնիկա/նախնական/

Համաձայն 2.2.2.2 տեխնիկայի պլանի – տեխնիկայի առանձնահատկությունները ցուցադրված են աղյուսակ 2-4 –ում

Աղյուսակ 2-4 Տեխնիկական առանձնահատկություններ աղյուսակ

Տեխնիկա	Հիմնական տեխնիկական բնութագիրը
Հրշեջ մեքենա	▪ տեսակը՝ լիաքարշակ ▪ ջրի բաքի տարողությունը՝ 3,500լ ▪ մեքենայի քաշը՝ 13 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկանիշներ ▪ մարդկանց առավելագույն քանակը բեռնախցիկում/կաբինա/: 6 ▪ խցիկներ: 2 խցիկանի ▪ տեխնիկայում տեղադրվել է այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են ջրի փողրակներ, արտանետման և ներծծման խողովակները, կտրող գործիք, մարտական հանդեձանք հավաքածու/կոմպլեկտ/, ձեռքի ռադիոկայանի սարքավորումներ եւ այլ սարքավորումները
Ավտոսանդուղք	▪ ավտոսանդուղքի բարձրություն: 25մ ▪ տեխնիկայի քաշը : 16 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկություն ▪ մարդկանց առավելագույն քանակը բեռնախցիկում : 2 ▪ խցիկ : մեկ խցիկ ▪ զամբյուղ ▪ տեխնիկայում տեղադրվելու է այնպիսի սարքավորուններով , ինչպիսիք են փողրակներ, կոշտ ջրի խողովակներ, կտրող սարք, մարտական հանդեձանքի հավաքածու/կոմպլեկտ/, ձեռքի ռադիոկայաներ և այլ սարքավորումներ
Շարժական տեխսպասարկման մեքենա	▪ տեսակը՝ լիաքրշակ ▪ տեխնիկայի քաշը՝ 6 տոննա ▪ ցուրտ եղանակներին շահագործելու հատկություն ▪ խցիկներ: Մեկ խցիկ ▪ սարքավորումներ – դիզելով եռակցման ապարատ, գեներատոր աշխատանքային սեղան ▪ սարքավորումներ - էլեկտրական օդի կոմպրեսորներ , գործիքների հավաքածու, ստուգման սարք, և այլ չափման սարքեր , աշխատանքային սեղան

2.2.3 Ձեռք բերման նախագիծ

2.2.3.1 Գնման քաղաքականություն

(1) Ծրագրի պատասխանատուները

Նկ 2-1 ցույց է տրված Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրվող դրամաշնորհի շրջանակներում երկու կողմերի համագործակցության կառուցվածքը/սխեման/



Գծապատկեր 2-1 Փոխհարաբերությունների սխեմա

(2) Ստացող երկրի կառավարություն

Հիմնականում հրշեջ տեխնիկան շահագործվելու է երեք մարզերի՝ Շիրակ, Լոռի, Սյունիք 18 հրշեջ ջոկատներում, որտեղի տեխնիկան արդեն շահագործելու ենթակա չէ: Ստացող կողմը ՓԾ-ն տրամադրել է անհրաժեշտ բյուջե տեխնիկայի շահագործման, պահմանման, վառելիքի, յուղի, պարբերաբար տեխնիկայի մասերի փոխելու համար:

Մյուս կողմից շարժական տեխսպասարկամն մեքենան պատկանում է ՓԾ-ի բազային, ՓԾ-ն պատասխանատվություն է կրում ապահովվել անհրաժեշտ բյուջե, մեքենաների

վերանորոգման համար:

Կարևոր է համարվու, որ սարքավորումը տեղակավի տեխնիկական սպասարկման ավտոկայանում, քանի որ դրա պատասխանատվությունը կրում է ՓԾ-ն: ՓԾ-ն հավատարմեցրել է կատարել տվյալ վերանորոգման աշխատանքները, մինչ սարքավորման ներմուծումը:

(3) Խորհրդատու

Հիմնական պայմանագրի և Դրամաշնորհի աջակցության պայմանագրի կնքումից հետո, ՓԾ-ն պետք է Ճապոնիայի խորհրդատուների հետ ծառայություն մատուցելու պայմանագիր կնքվի: Համաձայն պայմանագրի խորհրդատուն պարտավորվում է նախապատրաստել մրցույթի փաստաթղթեր, աջակցել մրցույթի անցկացմանը, ինչպես նաև վերահսկել տեխնիկայի արտադրության գործընթացը, պահեստամասերի ձեռք բերմում, տեխնիկայի և սարքավորումների տեղափոխումը:

(4) Մատակարար

Մատակարարը որոշվում է մրցույթի միջոցով: Մրցույթը անցկացվում է երկու փուլերով, առաջինը խորհրդատուների կողմից ներկայացվում է մրցույթի միջոցով գնվող ապրանքների տեխնիկական պահանջները, որակը, առանձնահատկությունները և քանակը: Այնուհետև բացվում է այն կազմակերպության փաթեթը, որը համապատասխանում է պահանջներին, որից հետո ստուգվում է գնացուցակը, և որոշվում է մրցույթին հաղթող կազմակերպությունը: Հաղթող տեխնիկայի մատակարարը պայմանագիր է կնքում Ա երկրի կողմի հետ:

2.2.3.2 Ձեռք բերման պայմանները

(1) Դրամաշնորհային աջակցության համակարգը

Ստացող կողմը ՓԾ ունի փորձ դրամաշնորհային աջակցության միջոցով ձեռք բերել տեխնիկա Երևան քաղաքի հրշեջ փրկարարական գույքի բարելավնամ ծրագիր, և գիտի գործընթացի հետթականությունը, սակայն անհրաժեշտ է յուրաքանչյուր փուլի քննարկում, խորհրդակցում:

(2) Տեխնիկայի տեղափոխման ժամանակի վնասված տեխնիկայի պատասխանատվությունը

Տեխնիկան ուղարկվում է Ճապոնիայից Վրաստանի Փոթի նավահանգիստ նավով, այն պետք է անցնի Վրաստանից Հայաստան ցամաքային ճանապարհով մաքսահատելով երկու երկրների սահմանները: Տեխնիկայի Երևանի ՓԾ-ի պահեստ հասնելուց հետո հանձնվելու է Հայաստան երկրի կողմին: Տեխնիկայի մատակարարը պատասխանատվություն է կրում անվնաս տեխնիկան տեղափոխել ծովային ճանապարհով, բայց եթե տեխնիկան վնասվելու կամ գողնալու դեպքում, Հայաստանի հետ խնդիրներ չստեղծել:

Հատկապես հայկական կողմը, երբ կազմակերպի տեխնիկայի տեղափոխումը Երևանից

դեպի երեք մարզերի Շիրակի, Լոռու, Սյունիքի 18 հրշեջ ջոկատներ, տեխնիկայի վնասվելու, գողանալու և այլի համար խնդիրներ չծագելու համար հայկական կողմն է կրում պատասխանատվություն:

2.2.3.3 Տեխնիկայի ձեռք բերման համար պարտականությունների բաժանումը

Բոլոր ծախսեր կապված տեխնիկայի ձեռք բերման, տեղափոխման մինչև ք. Երևանի ՓԾ հոգում է ճապոնական կողմը: ՓԾ-ին հանձնելուց հետո բոլոր ծախսերը, ինչպիսիքն են տեղափոխումնը թիրախային երեք մարզերի Շիրակի, Լոռու, Սյունիքի 18հրշեջ ջոկատներ հոգում է ՀՀ-ի կառավարությունը: Աղյուսակ 2-5 ցույց է տալիս երկու երկրների պարտականությունների բաժանումը:

Աղյուսակ 2-5 Երկու երկրների կառավարության պարտականությունների բաժանումը

	Բեվանդակություն	Պարտականությունների բաժանում		Նշումներ
		Ճապոնիա	՛Ա՛ երկիր	
Տեխնիկայի ձեռք բերում	Տեխնիկայի ձեռք բերում	●		
	Ծովային և ցամաքային ճանապարհով տեղափոխում	●		▪ Մինչև մաքսային վայր
	.Մաքսազերծում		●	▪ Հարկերից ազատում
	Ցամաքային ճանապարհով տեղափոխում	●		▪ Մինչև տեղափոխում Երևանի ՓԾ
Շահագործման ուսուցում Շահագործման ուղորդում	Շահագործման ուղեցույց	●	●	▪ ՓԾ-ի անձնակազմի ապրուստավճարը, ապրելավճարը տրամադրվում է Ա երկրի կողմից ▪ Նախնական ուսուցման համար անհրաժեշտ վառելիքի ծասերը հոգում է Ա երկիրը ▪ Ուսուցման համար վայրը տրամադրվում է Ա երկրի կողմից
	Զննման և սպասարկման ուղեցույց	●	●	
Պահեստամասեր	Անվտանգ և արդյունավետ օգտագործման ուղորդում	●	●	▪ ՓԾ-ի անձնակազմի ապրուստավճարը, ապրելավճարը տրամադրվում է Ա երկրի կողմից ▪ Նախնական ուսուցման համար անհրաժեշտ վառելիքի ծասերը հոգում է Ա երկիրը ▪ Ուսուցման համար վայրըտրամադրվում է Ա երկրի կողմից
Շահագործում և տեխնիկական սպասարկում	Տեխնիկայի գրանցում		●	▪ Տեխնիկայի տեղափոխում / Շիրակ , Լոռի , Սյունիք 18հրշեջ ջոկատներ/ ▪ հրշեջ մեքենաների կայանատեղ
	Տեխնիկական տեղակայելու վայր		●	
	Տեխնիկայի տեխնիկական ստուգում, սպասարկում վերանորոգում		●	▪ Տեխնիկայի անվտանգ շահագործման և սպասարկման ուսուցման ծախսերը

2.2.3.4 Գնումների վերահսկման ծրագիր

(1) Հիմնական քաղաքականություն

E / N և G / A Պայմանագրի կնքումից և նոտաների փոխանակումից հետո, անհատույց դրամաշնորհի աջակցության ծրագրի շրջանակներում, Հայաստանի և Ճապոնայի իրավաբանական անձ հանդիսացող խորհրդատվական կազմակերպության միջև կնքվում է պայմանագիր և ըստ պայմանագրի կանոնների իրականացվելու է պայմանագրում առկա կետերը: Կարևոր է, որ խորհրդատուները հստակ գիտակցեն և հասկանան այս ծրագրին առնչվող համագործակցության բովանդակությունը, նպատակը, և ճիշտ իրականացնեն այն: Տեխնիկայի ձեռք բերման ընթացքում անհրաժեշտ է մասնագետ, ով հրաշալի կտիրապետի տեխնիկայի շահագրոծման մեթոդներին, տեխնիկական առանձնահատկություններին, փորձ կունենա տեխնիկայի ստուգման և ուսուցման: Մասնավորապես, հայկական կողմը տեխնիկան երկարաժամկետ և արդյունավետ շահագործելու համար շատ կարևոր է ճիշտ ուսուցանել տեխնիկայի ամենօրյա զննումն ու սպասարկումը հիմնվելով ձեռք բերված փորձի և գիտելիքների վրա:

(2) Ծրագրի իրականացում

Ծրագրի իրականացման էությունը հետևյալն է.

- խորհրդատվություն, տեղային ստուգում,
- տեխնիկայի տեխնիկական բնութագրերի վերահսկում,
- մրցույթային փաստաթղթերի ձևակերպում,
- մրցույթային փաստաթղթերի մեկնաբանում և հաստատում,
- մրցույթի անցկացման աջակցություն / հասարակության հրապարակում, փասթաթղթերի տարածում, մրցույթի անցկացում, արդյունքների գնահատում/,
- պայմանագրի ստորագրման աջակցություն /պայմանագրի ստորագրման համար բանակցություններ, պայմանագիրի ստորագրում, պայմանագրի իսկությունը ստուգելու գործընթաց/:

(3) Գնումների վերահսկման գործընթաց

Գնումների վերահսկման հիմնական գործընթացի էությունը կայանում է հետևյալում՝

- պատվիրված տեխնիկայի ստուգումը, հաստատում,
- արտադրման ընթացքում ստուգումներ իրականացնել, գործարանային ստուգում, արտադրանքի ստուգում գործարանից առաքելուց առաջ,
- առաքումից առաջ ստուգման վերահսկում /տրվում է երրորդ կողմին/, ներկայացվում է ստուգման հաշվետվություն,

- նախնական հանդիպումներ ճշտելու /նավի բեռնման ժամանակացույցը, մաքսերից /հարկերից/ ազատելու համար հաստատումներ ստանալ, շահագործման փորձարկում/,
- շահագործման վերաբերյալ հրահանգավորում
- ընդունում և հանձնում,
- եզրափակիչ հաշվետվության կազմում,
- ծրագրի բաղկացուցիչ մասերի իրականացում

2.2.3.5 Որակի վերահսկման ծրագիր

Սուգելու համար, թե արդյոք արտադրվող տեխնիկան համապատասխանում պայմանագրում առկա որակին և առանձնահատկություններին, անցկացվելու է հետևյալ ստուգումները.

- մատակարարից կողմից պատվիրված տեխնիկայի բովանդակության մասին հաստատում
- հաստատում տեխնիկայի արտադրության վերաբերյալ, այցելել գործարան և ստուգել տեխնիկայի արտադրությունը , ստուգել մինչև գործարանից դուրս գալը
- ստուգում առաքելուց առաջ,
- տեխնիկայի ստուգում առաքման ժամանակ:

2.2.3.6 Տեխնիկայի ձեռք բերման ծրագիր

(1) Մատակարար

ՓԾ-ին տրամադրվում են ճապոնական արտադրության հրշեջ տեխնիկաներ «Երևան քաղաքի հրշեջ զույքի և սարքավորումների բարելավման» ծրագրի համաձայն, որոնք էլ շահագործվել և տեխսպասարկվել են ավելի քան 5 տարի /մինչ այս ծրագրի նախնական ուսումնասիրությունը/: Ուսումնասիրության արդյունքը ցույց է տվել, որ վարորդները, մեխանիկները պրոֆեսիոնալ շահագործում են ճապոնական արտադրության տեխնիկաները: Բացի այդ, ՓԾ-ը ցանկություն է հայտնել, որ այս ծրագրի շրջանակներում ևս ձեռք կբերվի ճապոնական արտադրության տեխնիկաներ, որոնք հաճախակի չեն վնասվում և սպասարկման վերանորոգման ծախսերը կկրճատվեն:

Բացի այդ, ՀՀ-ում առկա չեն արդյունաբերական հնարավորություններ արտադրելու հրշեջ մեքենա և ավտեսանդուղք, ապա քանի որ ձեռք բերման ծրագիրը իրականացվում է Ճապոնիայի կողմից, ապա տվյալ սարքավորրումները կարտադրվեն նույնպես Ճապոնիայում:

Բացի այդ, քանի որ ՀՀ-ի համար նախատեսված հրշեջ մեքենաները և ավտոսանդուղքները արտադրությունը կարող են իրականացնել Ճապոնիայի միանգամից

2 գործարան, ապա կապպահովի մրցունակությունը: Ավելին, քանի որ այս երկու արտադրողները կարող են տրամադրել նաև տվյալ ոլորտի բազմաթիվ մասնագետներ, ապա գնային առաջարկի մրցունակությունը ավելի է բարձրանում:

Ճապոնիայում առկա են նաև շարաժական տեխսպասարկման մեքենաների մի քանի արտադրողներ, հետևաբար ձեռք կբերվեն ճապոնական արտադրության ապրանքներ:

2-6 աղյուսակում ցուցադրված է տեխնիկայի և սարքավորումների ձեռք բերման բաժանումը:

Աղյուսակ 2-6 Գնվող տեխնիկայի դասակարգում

Սարքավորման անվանումը	Արտադրող			Հիմք
	Ճապոնիա	Հայաստան	Երրորդ երկիր	
Հրշեջ մեքենաներ	●	---	---	Գնման արդյունքում
Հրշեջ ավտոսանդուղք	●	---	---	Գնման արդյունքում
Շարժական տեխսպասարկման մեքենա	●	---	---	Գնման արդյունքում

(2) Ձեռք բերման ճանապարհը

1) Ձեռք բերման ճանապարհի ուսումնասիրություն

Այս ծրագրի շրջանակներում ձեռք բերվող տեխնիկան պետք է լինի միայն Ճապոնիայից/բացառությամբ մեջը տեղադրվող ապրանքներից/, տեղափոխումը կլինի Ճապնիայի գլխավոր նավահանգստից մինչև վերջնակետ ՓԾ-ի պահեստ ք. Երևանում: ՓԾ է կրում պատասխանատվություն տեղափոխելու տեխնիկաները թիրախային մարզերի յուրաքանչյուր հրշեջ ջոկատ: Տեխնիկաների տեղափոխման երեք ճանապարհ կա, որը ցուցադրված է 2-7 սխեմայում, բայց Վ երկրի նավահանգիստը ամենաիրատեսական է, ապա ընդունելի է տեղափոխման այդ ճանապարհը: Քարտեզ 2-2 ցույց է տրված Վրաստանի «Փոթի» նավահանգստում բեռնաթափելուց հետո ճանապարհ դեպի վերջնական նշանակետ Ա երկրի ք. Երևան: Փոխադրման ժամանակը առավելագույնը 1.5 ամիս է: Նշենք նաև, որ բեռնափոխադրումն իրականացվում են երեք փուլով, ինչը կախված է արտադրող-գործարանի արտադրական հնարավորությունից:

Աղյուսակ 2-7 Տրանսպորտային երթուղիներ

1.	Վրաստանով (Ճապոն. խոշոր նավահ. ⇒Հունաստան (Վերաբեռնում) ⇒ Վրաստան ⇒ Հայաստան Առավել հեռանկարային երթուղի
Տրանսպորտային երթուղի	Ֆիդերային նավերի ոչ մեծ քանակությամբ ռեյսեր 20-30 օր Ճապոն. խոշոր նավահ. ⇒ ⇒ Հունաստան Վերաբեռնում ֆիդեր. Նավ ի վրա «Պիրեյոս» նավահանգստում ⇒ ⇒ Վրաստան, «Փոթի» նավահանգիստ (նախնական մաքսային գրանցում) ⇒ 30-60 օր ⇒ ⇒ Վրաստան, Հայաստանի սահման (մաքսային գրանցում) ⇒ Վերջնական նշանակման կետ 1-3 օր 2-4 օր Անհրաժեշտ օրերի քանակը՝ 40-70 օր
Ամփոփում	Ներքին փոխադրումների ժամանակ հեռավորությունն ավելի կարճ է, ինչը առավելություն է: Սակայն ծովային փոխադրումը մի փոքր ավելի է տևում: Բեռնաթափումն իրականացվում է Հունաստանում: Բեռնաթափման նավահանգստից մինչև «Փոթի» նավահանգիստ նավերը գնում են մոտավորապես ամիսը մեկ անգամ, տրանսպորտային միջոցների նման չվացուցակը անհրաժեշտություն է առաջացնում բեռնաթափման նավահանգիստներում ապրանքները երկարատև պահպանման հանձնելու: Այնուհանդերձ, մյուս երկու ճանապարհների հետ համեմատած, այս ճանապարհին անվտանգ է և փոխադրման համար ավելի հեշտ: Ուստի այս պահին տվյալ ճանապարհը հանդիսանում է առավել հեռանկարային երթուղի:
2.	Իրանով (Ճապոն. խոշոր նավահ. ⇒ԱՄԷ (Վերաբեռնում) ⇒Իրան ⇒Հայաստան) «Երևան քաղաքի հակահրդեհային սպասարկման տեխնիկական սարքավորումներ» ծրագրի իրականացման համար օգտագործվող երթուղին
Տրանսպորտային երթուղի	Ֆիդերային նավերը քիչ են, պետք է սպասել մոտ 20 օր ապրանքի վերաբեռնման համար Ճապոն. խոշոր նավահ. ⇒ ⇒ ԱՄԷ Վերաբեռնում ֆիդերային նավերի վրա «Ջաբել-Ալի» նավահանգստում ⇒ ⇒ Իրան, «Բենդեր-Աբբաս» նավահանգիստ (նախնական մաքսային գրանցում) ⇒ 40-60 օր ⇒ ⇒ Իրան, Հայաստանի սահման (մաքսային գրանցում) ⇒ Վերջնական նշանակման կետ (զամաքային փոխադրումներ) 1-3 օր 5-7 օր Անհրաժեշտ օրերի քանակը՝ 45-70 օր
Ամփոփում	«Երևան քաղաքի հակահրդեհային սպասարկման տեխնիկական սարքավորումներ» ծրագրով գնումներ կատարելու համար ընդունված երթուղի: Չնայած տեսականորեն այս երթուղին հնարավոր է, բայց տագնապալի իրադրության պատճառով խնդրահարույց կլինի ապահովել ապրանքի փոխադրման անվտանգությունը: Բացի այդ, փոխադրողներին պետք կլինի պահակախումբ, ինչը հարմար չի լինի տրանսպորտային ճանապարհի համար, բացի այդ այս ճանապարհը երկար ժամանակ է պահանջում, ինչը ևս խնդրահարույց հարց է:
3.	Թուրքիայով (Ճապոն. խոշոր նավահ.⇒ Թուրքիա⇒ Հայաստան) Հայաստանի և Թուրքիայի միջև կան դիվանագիտական դժվարություններ
Տրանսպորտային երթուղի	Ճապոն. խոշոր նավահ. ⇒ Թուրքիայի գլխավոր նավահան.(Նախնական մաքսային գրանցում)⇒ ⇒ ⇒ Թուրքիա、Հայաստանի սահման(մաքսային գրանցում)⇒ Վերջնական նշանակման կետ (զամաքային
Ամփոփում	Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական դժվարությունների պատճառով տվյալ երթուղին հարմար չէ:

2) Ծովային փոխադրում

Ինչպես ցույց է տրված 2-7 Աղյուսակում, Ճապոնիայի հիմնական նավահանգիստից մինչև Վրաստանի «Փոթի» նավահանգիստ ճանապարհը տևում է 30-60 օր: Ճանապարհին իրականացվում է վերաբեռնում Հունաստանի ֆիդերային նավերի վրա: ՌՕՌՕ նավով նախատեսվում է տեղափոխել մեքենաները, իսկ կոնտեյներով՝ պահեստամասերը:

3) Ներքին փոխադրումներ

Վրաստանի «Փոթի» նավահանգիստից հետո, բեռը տեղափոխվելու է վերջնակետ թրեյլերներով /կցանք/ ցամաքային ճանապարհով: Տրանսպորտային ճանապարհները ցուցադրված են 2-2 քարտեզում:

Գծապատկեր 2-2 Ներքին փոխադրումների երթուղին՝ վերջնական նշանակման կետը Վրաստանի «Փոթի» նավահանգստում

4) Վրաստանի տարածքով /նախնական մաքսային գրանցում, ցամաքային փոխադրումներ/

Բեռնաթափումը նախատեսվում է իրականացնել Վրաստանի Փոթի նավահանգստում, ինչը կտևի 2օր, որի ընթացքում կիրականացվեն ապրանքի դատարկման, նախնական մաքսազերծման և այլ գործընթացներ, այնուհետև դրանք ցամաքային ճանապարհով կտեղափոխվեն նավահանգստից, մինչև Սադախլոում գտնվող ՀՀ-ի սահման՝ ինչը կտևի 3 օր:

Փոթի նավահանգստի բեռնաթափման ամբարտակների վիճակը	Խարսխված RORO նավը

Լուս 2-1 Վրաստանի Փոթի նավահանգիստը

Փոթիից մինչև ՀՀ-ի սահմանը ընկած ճանապարհը գտնվում է լավ վիճակում և տեղափոխության ժամանակ բեռը չի վնասվի ճանապարհային պայմաններից (սավալտապատ վիճակ, տրանսպորտային միջոցների համար նեղ լայնությամբ, ուղածիգ հարթ ճանապարհներ)

Լավ ճանապարհային վիճակով տրանսպորտային ուղիներ	Տրանսպորտային ուղիներով երթևեկում են մեծ քանակությամբ բեռնատար մեքենաներ

Լուս 2-2 Վրաստանի ճանապարհային պայմանները
(նկարահանման տեղամասը՝ Փոթի նավահանգստի շրջակայք)

5) Վրաստան, Հայաստանի սահման /մաքսային գրանցում/

Հայաստանի սահմանի մաքսային անցակետը հնարավոր է անցնել նույն օրը: Նախքան տեխնիկաների ժամանումը Ճապոնիայի մատակարարը /առևտրային ընկերությունը/ ՓԾ-ի համար նախապատրաստում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպիսիք են՝ հաշիվ-ապրանքագիր, փաթեթավորման թերթ, ապրանքի ծագման վկայական, ապահովագրություն /բնօրինակ/: ՓԾ-ն այս փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է հայտագրման փաստաթղթերը՝ հարկերից ազատվելու համար /Անմաքս ներմուծման հայտ/, այնուհետև Պետտուրքերի և մաքստուրքերի բաժին է ներկայացվում պաշտոնական փաստաթղթերը և պայմանագիրը: Տվյալ բաժինը հարկերից ազատվելու

վկայականը ուղարկում է մաքսատուն, որտեղ էլ իրականացվում է ներմուծվող տեխնիկաների հարկերից ազատումը: Տվյալ գործընթացի իրականացումը տևում է մի քանի օր:

Ներմուծման սակագները և այլ հարկերը, ոչ թե լինելու են այսպես կոչված վերադարձման համակարգով, այլ նախապես ՀՀ-ի հարկային մարմինների կողմից ձեռք բերված ապրաքների ներմուծումը, կիրականացվեն առանց մաքսազերծման՝ազատելով դրանք հարկերից: Հարկերից ազատման համար ՓԾ-ի կողմից ներկայացվել է նամակ՝ ներմուծվող ապրանքի անվանումներով, քանակությամբ և այլն, ինչը հաստատվել է ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից:

6) Հայաստանի տարածքով

ՀՀ-ի գլխավոր ճանապարհները ասվալտապատ են և տրանսպորտային ուղիների խնդիր չկա: Բացի այդ, ՀՀ-ի Ճապոնիայի արտադրության բեռնատարների պաշտոնական դիլերը նույնպես ծանր բեռնափոխադրումները իրականացնում է միևնույն տրանսպորտային ուղիներով, հետևաբար տեղափոխության ընթացքում խնդիրներ չեն առաջանա:

7) ՓԾ-ի Երևան քաղաքի գլխավոր շտաբ (վերջնական նպատակակետ) (սարքավորումների ժամանակավոր պահեստավորում)

Սարքավորումների վերջնական նպատակակետ հանդիսանում է ՓԾ-ի Երևան քաղաքի գլխավոր շտաբից ոչ հեռու գտնվող տեղամասը (ուղիղ գծով մոտ 10կմ) (նկ. 2-3) , որը հանդիսանում է սարքավորումների ժամանակավոր պահեստավորման վայրը («Երևան քաղաքում հրշեջ սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում այն նույնպես հանդիսացել է սարքավորումների ժամանակավոր պահեստավորման վայր):

Գծապատկեր 2-4-ից երևում է (տարածքի օդային լուսանկար), որ տարածքը հսկայական է (ըստ գծ. 2-5-ի՝ մոտ 110մ×110մ=12,000մ2) և քանի որ հրշեջ մեքենաները և ավտոսանդուղքները կարող են կայանվել այնպես, որ մեկ մեքենան զբաղեցնի 2,5 մ × 10 մ մակերես, ապա տարածքում հնարավոր է ժամանակավորապես տեղադրել 36 հրշեջ մեքենա և 3 ավտոսանդուք:

Լուս 2-3 ՓԾ-ի տեղամասի տարածքները (սարքավորումների տեղակայման վայր)

Գծապատկեր **2-3** ՓԾ-ի գլխավոր շտաբի և տեղամասի մինջև դիրքային կապը

Գծապատկեր **2-4** ՓԾ-ի տեղամասի (սարքավորումների տեղակայման վայր) օդային լուսանկար



Գծապատկեր 2-5 ՓԾ-ի տեղամաս (սարքավորումների տեղակայման վայր)

2.2.3.7 Կարգավորման/շահագործման ծրագիր

Արտադրողի կողմից նշանակված մասնագետները ՓԾ-ի աշխատակիցներիի հետ կիրականացննեն ձեռք բերված սարքավերումների փորձնական գործարկում և կարգավորում՝ հաստատելու համար, որ սարքերը նորմալ են աշխատում: Տվյալ մասնագետները համապատասխանաբար առանձին-առանձին կիրականացնեն հրշեջ մեքենաների, ավտոսանդուղքների և շարժական տեխսպասարկման մեքենայի փորձնական գործարկումը և կարգավորումը:

2.2.3.8 Սկզբնական գործարկման, շահագործման ծրագիր

(1) Սկզբնական գորրծարկման և շահագործման ուղղորդման ակնարկ

Արտադրողի կողմից նշանակված մասնագետներ, կիրականացնեն ձեռք բերվող սարքավորումների օգտագործման և գորրծարկման ուղղորդում: Տվյալ մասնագետները համապատասխանաբար առանձին-առանձին կիրականացնեն հրշեջ մեքենաների, ավտոսանդուղքների և շարժական տեխսպասարկման մեքենայի սկզբնական գորրծարկման ուղղորդում:

(2) Սկզբնական գորրծարկման, շահագործման ուղղորդման և ծրագրային ապահովման բաղադրիչների ներդրման վայրի վերաբերյալ

Սկզբնական գորրծարկման, շահագործման ուղղորդման և ծրագրային ապահովման բաղադրիչների ներդրման վայրը՝ ինչպես «Երևան քաղաքում հրշեջ սարքավորումների բարելավման ծրագրի» դեպքում, հանդիսանալու է ՓԾ-ի սարքավորումների տեղակայման տեղամասը:

(3) Ավտոսանդուղքի սկզբնական գորրծարկման, շահագործման ուղղորդման, ծրագրային ապահովման բաղադրիչների ներդրման վայրի վերաբերյալ

Ավտոսանդուղքի սկզբնական գորրծարկումը և շահագործման ուղղորդումը, ինչպես նաև ծրագրային ապահովման բաղադրիչների ներդրումը, իրականացվելու է Երևանի 6-րդ

հրշեջ ջոկատի կամ 13-րդ հրշեջ ջոկատի հատուկ ուսուցողական տեղամասերում: Հարկ է նշել, որ «Երևան քաղաքում հրշեջ սարքավորումների բարելավման ծրագրի» ժամանակ՝ ավտոսանդուղքի վարման դասընթացները իրականացվել են Երևանի 6-րդ հրշեջ ջոկատում:

Ավտոսանդուղքների վարման ուսուցողական տեղամաս (1) Լուսանկարված՝ Երևանի 6-րդ հրշեջ ջոկատում	Ավտոսանդուղքների վարման ուսուցողական տեղամաս (2) Լուսանկարված՝ Երևանի 13-րդ հրշեջ ջոկատում

Լուս 2-4 Ավտոսանդուղքների վարման ուսուցողական տեղամաս



Գծապատկեր 2-6 Ավտոսանդուղքների վարման ուսուցողական հնարավոր տեղամասերի տեղակայման քարտեզ

2.2.3.9 Ծրագրի բաղադրիչ մասը

(1) անհրաժեշտությունը

Քանի որ «Երևան քաղաքի հրշեջ-փրկարարական գույքի և սարքավորումների բարելավման ծրագրով» Երևան քաղաքի հրշեջների հետ հիմնականում անցկացվել է ճապոնական արտադրության մեքենաների մանրամասն ծանոթացում, ապա այս ծրագրի թիրախ հանդիսացող երեք մարզերի՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի հրշեջ ջոկատների անձնակազմի և ղեկավարության կծանոթացվի միայն մեքենաների տեխնիկական մասը: Երևան քաղաքի հրշեջները ունեն փորձ շահագործելու ճապոնական արտադրության մեքենաներ, հետևաբար իրենք իրենց փորձ կփոխանցեն Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերի հրշեջ ջոկատների անձնակազմին, թե ինչպես անվտանգ և արդյունավետ շահագործեն մեքենաները:

(2) Անհրաժեշտ տեխնիկական հրահանգավորման բովանդակությունը

Առ այսօր Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում շահագործվում է ավել քան 25 տարի առաջ արտադրված հրշեջ մեքենաներ: Տվյալ նախագծով նախատեսվող հրշեջ մեքենաների շահագործումը բավականին տարբերվելու է նախորդից իր հրշեջ մեքենայի պոմպի հզորության, անվտագության սարքավորումների և այլի պատճառով: Հրշեջ ավտոսանդուղքի զամբյուղի, ինչպես նաև անվտանգության սարքավորումենրը նախկից բավականին տերբեր են, հետևաբար անհրաժեշտ է նոր տեխնիկայի անվտանգ շահագրծման ծանոթացում:

Ուստի նոր տեխնիկայի անվտանգ ու արդյունավետ շահագործման համար ապահովվում ենք հետևյալ անհրաժեշտ տեխնիկական ուղեցույցները.

- Ձեռնարկ հրշեջ մեքենաների և ավտոսանդուղքի շահագործման հրշեջ – փրկարարական գործունեության մասին
- Տեխնիկական ուղեցույց, որտեղ նշված կլինի հրշեջ մեքենաների և ավտոսանդուղքի անվտանգ և արդյունավետ շահագործման տեխնիկայի մասին:

(3) Ծրագրի բաղկացուցիչ մասերի նպատակը

Որպես «Երևան քաղաքի հրշեջ գույքի և սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում կիրառված ծրագրի բաղկացուցիչ մասեր, ինչպես նաև Հակաճգնաժամային Կառավարման Ակադեմիայի անձնակազմի և Երևան քաղաքի հրշեջներ հասել են բավականին լավ արդյունքների, այսպիսով այս ծրագրի շրջանակներում թիրախային երեք Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերին տրամադրելով տեխնիկա նպատակ ունեք, որ այնտեղ էլ մակարդակը կբարձրանա և կհասնի Երևանին: Ավելացնենք, որ նշված մարզերի հրշեջ ջոկատների անձնակազմի թիվը մոտ 120 մարդ է:

Նպատակներ մասնավորապես նշված են երեք կետերով.

- Ձեռնարկի վերախմբավորել (ավելացումներ անել նոր տարբերակում) երկարաժամկետ օգտագործման համար
- Ինչպես արագ և արդյունավետ շահագործել հրշեջ մեքենաները հրշեջ-փրկարարակ գործողություններ կատարելու ժամանակ
- Ինչպես արդյունավետ շահագործել ավտոսանդուղքը բարձր վայրերում հրշեջ-փրկարարական գործողությունների ժամանակ

(4) Ծրագրի բաղկացուցիչ մասերի արդյունքը

1) Հրշեջ-փրկարարական աշխատանքների մասին ձեռնարկ

«Երևան քաղաքի հրշեջ գույքի և սարքավորումների բարելավման ծրագիրի» շրջանակներում ձեռք բերված հետևյալ ձեռնարկները մինչ օրս օգտագործվում են Հակաճգնաժամային Կառավարման Ակադեմիայում դասավանդելու ժամանակ:

- Հրշեջ տեխնիկայի շահագործման ձեռնարկ (Հրշեջ մեքենա ջրի բաքով)
- Հրշեջ մեքենաների տեխնիկական ձեռնարկ (Հրշեջ մեքենա ջրի բաքով)
- Հրշեջ տեխնիկայի շահագործման ձեռնարկ (ավտոսանդուղք)
- Հրդշեջ տեխնիկայի տեխնիկական ձեռնարկ (ավտոսանդուղքով)

Մյուս կողմից, տվյալ նախագծի շրջանակներում տրամադրվող տեխնիկան համալրված կլինի նոր ֆունկցիաներով, հետևաբար անհրաժեշտություն կա վերախմբավորել վերոհիշյալ ձեռնակները մինչ ծրագրի ավարտը 2019թ:

Որպես սույն ծրագրի բաղկացուցիչ մաս, անհրաժեշտ է վերանայել և վերախմբավորել վերոհիշյալ ձեռնարկները, հատկապես անվտանգ շահագործելու և հրշեջ տեխնիկայի տեխնիկական մասերը կապված նոր ֆունկցիաների հետ, քան օգտագործել առկա ձեռնարկները, ինչպես նաև հրատարակել տեխնիկական հրահանգները փոխանցելու դրանք ՓԾ :

2) Հրշեջ մեքենաների շահագործում և հրշեջ-փրկարարական գործունեության կատարելագործում

Ոչ միայն կարևոր է թե ինչպես հրշեջ մեքենաների ամենօրյա սուգումներն ու սպասարկումն իրականացնելը, այլ նաև հրդեհի վայր ժամանելիս համագործակցելով հասարակության հետ հրդեհի վայրից ապահով տարահանում իրականացնել, անվտանգ և արդյունավետ շահագործել հրշեջ մեքենան և ավտոսանդուղքը, խնայելով ջուրը հրդեհաշիջման, կամ հրշեջ-փրկարարական գործողություններ իրականացնել

3) Ավտոսանդուղքի արդյունավետ տեխնիկական շահագործման կատարելագործում

Ավտոսանդուղքը շարունակաբար շահագործելու համար, տեխնիկական

սպասարկման և զննումների հմտությունները տիրապետելու հետ միասին, հարկավոր է նաև հրդեհաշիջման վայրում ապահովել հրշեջ մեքենաներից ջրի անընդհատ մատակարարում, ավտոսանդուղքի բարձրացում, երկարեցում և թեքում, հրշեջ աշխատանքների ժամանակ սանդուքի ծայրին սարքավորված զամբյուղից ջրի լիցքաթափում և ներխուժում շենքի ներս: Յուրացնելով նշված հմտությունները՝ կախված հրդեհի տեսակից, չափերից, ռիսկից և այլնից, կարելի է իրականացնել անվտանգ, արագ և արդյունավետ հրշեջ-փրկարարական աշխատանքներ:

Հարկ է նշել, որ ավտոսանդուղքի ոչ ճիշտ շահագործման դեպքում, հնարավոր է վայր ընկնել դրանից, ինչպես նաև առկա են ռիսկեր, որոնց դեպքում հնարավոր են հրշեջների, ինչպես նաև բնակիչների ներգրավվմամբ խոշոր վթարներ: Հետևաբար սանդուղքների միջոցով գործողություններ իրականացնելիս (հատկապես մի շարք գործողություններ, ինչպիսին են սանդուղքների երկարացման ժամանակ մեքենայի մարմնի կայունացումը և անշարժացումը), հարկավոր է համոզվել, որ դրանք ապահով են: Ինչպես նաև անվտանգության խախտման դեպքում, հասկանալ սարքի աշխատանքային լիմիտը, այնպես որ հնարավոր լինի անվտանգ գործածել սանդուղքը:

(5) Բաղկացուցիչ մասի գործունեությունը

Հիմնական հղում կատարելով «Երևան քաղաքի հրշեջ գույքի և սարքավորումների բարելավման ծրագիրին», բաղկացուցիչ մասնի իրականացումը ուղղված կլինի ստորև նկարագրված կետերին: Բաղկացուցիչ մասը բաժանված է մեխանիկական նախապատրաստությունների և տեխնիկական ուղեցույցներ:

1) Երկարատև հրշեջ-փրկարարական արդյունավետ գործունեության համար սպասարկման ձեռնարկ

«Երևան քաղաքի հրշեջ գույքի և սարքավորումների բարելավման ծրագիրով» տրամադրվել է չորս ձեռնարկներ Հրշեջ տեխնիկայի շահագործման ձեռնարկ (հրշեջ մեքենա ջրի բաքով), Հրշեջ մեքենաների տեխնիկական ձեռնարկ (հրշեջ մեքենա ջրի բաքով), Հրշեջ տեխնիկայի շահագործման ձեռնարկ (ավտոսանդուղք), Հրշեջ տեխնիկայի տեխնիկական ձեռնարկ (ավտոսանդուղքով), այս ծրագրի շրջանակներում կվերանայվի և կխմբավորվի, և կավելացվի նոր արտադրվող տեխնիկաների նոր ֆունկցիաները: Ավելին, ձեռնարկների տեխնիկական լրացումները կկատարվեն ՓԾ-ի խորհրդով և աջակցությամբ հաշվի առնելով այդ տեղանքների պայմաններն ու առանձնահատկությունները:

2) Հրշեջ մենքենաների շահագործումը և հրդեհաշիջման տեխնիկան

Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում առկա հին հրշեջ մեքենաներով հնարավոր չէ պատշաճ և բավարար հրդեհաշիջման աշխատանքներ կատարել: Ավելին ռիսկային այդ մեքենաների օգտագործումը, քանի որ դրանցով հնարավոր չէ անվտանգության ապահովում: Օրինակ հրդեհի վայրում հրշեջները ստիպված են հնարավորին մոտենալ կրակին հրդեհաշիջում կատարելու համար, քանի որ մեքենայի ջրի ճնշումը բավականին ցածր է, և հնարավոր չէ համապատասխան վայրից կատարել : Մյուս կողմից այս ծրագրի

շրջանակներում տրամադրվող հրշեջ մեքենաների ջրի ճնշումը բավականին բարձր է, ոչ միայն հնարավոր է պատշաճ հրդեհաշիջում իրականացնել այլ նաև ջուր մատակարարել մեկ այլ հրշեջ մեքենայի: Ավելին, ոչ միայն կբարելավվի հրշեջ մեքենայի մեջի սարքավորումները, այլ նաև նրա շահագործման ֆունկցիաները, որոնք տարբերվում են ներկայիս ՓԾ-ի տեխնիկաներից, և հնարավոր է անվտանգ և արդյունավետ շահագործել:

3) Ավտոսանդուղքի շահագործման տեխնիկան

ՓԾ կողմից օգտագործվող ավտոսանդուղքների անվտանգության համակարգն ամբողջովին վնասված է և այլևս շահագործման ենթակա չէ: Քանի որ ավտոսանդուղքը չունի զամբյուղ, ապա հնարավոր չէ անվտանգ հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներ կատարել: Բացի դրանից քանի որ չկա ջրի մոնիտոր զամբյուղում, վտանգելով իրենց կյանքը բարձրանում են աստիճաներով, հնարավոր է վայր ընկնեն, իրենց հետ տանելով ջրի փողրակները, որպեսզի հրդեհաշիջում կատարեն: Այս ծրագրի շրջանակներում ներմուծելով ավտոսանդուղք, որն հագեցված կլինի զամբյուղին կցված ջրի մոնիտորով/փողրակ/, կապահովի հրշեջներ անվտանգությունը, բայց այն ճիշտ օգտագործելու համար անհրաժեշտ է ավտոսանդուղքի ճիշտ շահագործման եղանակների մասին տեխնիկական հրատարակել:

(6) Բաղկացուցիչ մասը թիրախային մարզերի համար/ ուսանողներ/

1) Երեք մարզերի հրշեջները

Ընտրված թիրախային երեք մարզերի՝ Շիրակի, Լոռու, Սյունիքի 18 հրշեջ ջոկատների անձնակազմը կազմում է մոտ 120 հոգի, ում համար կիրականացվեն ծրագրի բաղկացուցիչ դրույթները: Ընտրված անդամներից խումբ (մոտ 6-7 հոգի) կկազմվի, ներառյալ օղակի հրամանատ, հրշեջ, մեքենայի վարորդ, ավտոսանդուղքի վարորդ, իրական հրդեհաշիջման գործողություններ կատարելու համար: Ճապոնացի տեխնիկայի մասնագետները տեխնիկական ցուցումներ կտան ՓԾ-ի դասախոսներին (նախկին ծրագրի պարապմունքների մասնակիցներին) տեխնիկայի շահագործման վերաբերյալ, և ՓԾ-ի աջակցությամբ վերջիններս էլ կուսուցանեն երեք մարզերի մյուս անձնակազմին:

2) ՓԾ-ի գլխավոր մասի անձնակազմ, Հակաճգնաժամային կառավարման ակադեմիայի անձնակազմը

Այս ծրագրի շրջանակներում կընտրվեն մոտ 5 հոգի մասնակցելու պարապմունքների, Հայաստանի հրշեջների պատրաստման և ուսուցման հետ կապ ունեցող անձիք ՓԾ-ից և Հակաճգնաժամային կառավարման ակադեմիայից, ովքեր չեմ մասնակցել «Երևան քաղաքի հրշեջ գույքի և սարքավորումների բարելավման ծրագիր» պարապմունքներին: Հետագայում ակադեմիայի դասախոսները կկարողանան օգտագործելով վերահրատարակված ձեռնարկները կազմակերպել Հայաստանի երիտասարդ հրշեջների ուսուցումն ու վերապատրաստումը:

2.2.3.10 Իրականացման գործընթացը

Այս նախագիծը իրականացվում է Ճապոնիայի դրամաշնորհի աջակցության շնորհիվ: Փուլերը ցուցադրված են աղյուսակ 2-8 –ում:

Աղյուսակ 2-8 Իրագործման ընթացքի աղյուսակ



2.3 Գործընկեր երկրների համագործակցության ակնարկ

Ստորև նշված կետերի համաձայն Ճապոնիայի դրամաշնորհային աջակցության միջոցով իրականացվող սույն նախագծի Ա երկրի կողմի պարտավորություններն են.

2.3.1 Բանկային գործողությունների կազմակերպում, վճարման լիազորագրի տրամադրում

Հայաստանի կողմից Ճապոնայում բացել բանկի հաշիվ, և լիազորագիր տրամադրել բանկ ներկայացնելու և վճարումներ կատարելու համար: Բացի այդ պարտավորվել վճարել բանկային ծառայությունների և այլ միջնորդավճարների համար, որոնք նախատեսված են բանկի կողմից:

2.3.2 Փոխշահավետ աջակցում

Սույն ծրագրի շրջանակներում աջակցել ծրագրի հետ կապ ունեցող Ճապոնացիների Հայաստան մուտք գործելուն, ինչպես նաև ապահովել անհրաժեշտության դեպքում կառավարություն այցելությունները կազմակերպելը:

2.3.3 Հարկերից ազատում

Սույն ծրագրի շրջանակներում, ծրագրի հետ կապ ունեցող Ճապոնացիներին և Ճապոնական իրավաբանական անձանց ազատել երկրի ներսի հարկերից: Ինչպես նաև սույն ծրագրով ձեռք բերվող տեխնիկայի և սարքավորումների մաքսային փաստաթղթերի

ձևակերպում և մաքսազերծում կատարում:

2.3.4 Տեխնիկայի գրանցում

Հրշեջ մեքենաներն Հայաստանում վարելու համար մեքենաների գրանցումն իրականացնել:

2.3.5 Դասընթացների ժամանակ վառելիքի, յուղի, հրդեհաշիջման աշխատանքներ կատարելու ծախսերը, ՓԾ-ի ճանապարհածախսը,

Պարապմունքներին ներկա գտնվելու համար ՓԾ-ի անձնակազմի ճանապարհածախսը, ապրուստավճարը, ապրելավճարը, ինչպես նաև տեխնիկայի շահագործման ընթացքում անհրաժեշտ վառելիքի, յուղի և այլ ծախսերի հոգում:

2.3.6 Տեխնիկայի տեղափոխում յուրաքանչյուր հրշեջ ջոկատ

Ճապոնական կողմը փոխադրումը իրականացնում է մինչև ՓԾ-կենտրոնական վարչություն: Հանձնումից հետո Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի 18 հրշեջ ջոկատներ տեխնիկայի տեղափոխումը պեքտ է իրականացվի Ա երկրի կողմից:

2.3.7 Անվտանգ և ապահով կայանատեղի ապահովում

Յուրաքանչյուր հրշեջ ջոկատում հրշեջ տեխնիկայի համար անվտանգ և ապահով կայանատեղի ապահովում:

2.3.8 Տեխնիկայի համապատասխան տեխնիկական սպասարկում և շահագործում

Տրամադրել բյուջե հրշեջ մեքենաների համապատասխան սպասարկման և վերանորոգման համար: Ինչպես նաև ապահովել հրշեջ տեխնիկայի անվտանգ շահագործումն իրականացնող համապատասխան որակավորմամբ անձնակազմ, ովքեր կունենան տեխնիկական անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ:

2.3.9 Նախագծի մոնիտորինգի հաշվետվություն

Նախագծի մոնիտորինգի հաշվետվությունը կազմվել է 2017թ-ի ապրիլի 21-ին ստորագրված Ք/Ա-ում (երրորդ դաշտային հետազոտություն) նշված ժամանակացույցի համաձայն (ընդհանուր 4 անգամ):

2.3.10 Այլ դրույթներ

Համաձայն սույն ծրագի, այլ ծախսեր, որոնք ընդգրկված չեն Ճապոնիայի դրամաշնորհային աջակցության մեջ, հոգալու է հայկական կողմը:

2.4 Նախագծի կառավարում/տեխնիկական սպասարկում

Տվյալ նախագծի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների տեղակայումից հետո, դրանց ամենօրյա տեխնիկական սպասարկումը իրականացվելու է յուրաքանչյուր հրշեջ ջոկատում:

Եթե վերանորոգման աշխատանքները հնարավոր չէ իրականացնել հրշեջ ջոկատներում, ապա դրանց իրականացման համար ՓԾ-ի գլխավոր շտաբից կուղարկվի շարժական տեխնիկական սպասարկման մեքենա կամ սարքավորումները կտեղափոխվեն Երևանի ՓԾ-ի տեխնիկական սպասարկման ավտոկայան: Հետագայում նույնպես տվյալ համակարգում փոփոխություններ չեն իրականացվի:

Տեխսպասարկման բյուջեն ներկայացված է աղյուսակ 2-9-ում, ինչը ներառված է ՓԾ-ի տարեկան բյուջեի մեջ:

Համաձայն խորհրդատուի նախահաշիվի՝ 36 հրշեջ մեքենա, 3 ավտոսանդուղք և 1 շարժական տեխսպասարկման մեքենա տեղակայելու դեպքում, տարեկան տեխնիկական սպասարկման, վառելիքի, յուղի ծախսերը՝ 5 տարավա կտրվածքով, մոտավորապես կկազմեն միջինում 29,590,000 դրամ, 10 տարավա կտրվածքով՝ 47,144,000 դրամ (հիմք ընդունելով «2.5.2.4 Անհրաժեշտ տեխնիկական սպասարկման, վառելիքի, յուղի ծախսերի հաշվարկները»), ինչը կազմում է աղյուսակ 2-9-ում առկա 2016թ.-ի տարեկան ծախսերի մոտ 11-18%-ը:

Աղյուսակ 2-9 Փրկարար ծառայության սարքավորումների տեխնիկական սպասարկման, վառելիքի յուղի ծախսերի նախահաշիվ /2011-2016 թթ./

/Միավոր՝ Հայկական Դրամ/

	2011	2012	2013	2014	2015	2016
Սարքավորումների տեխնիկական սպասարկման ծախսերը	54. 513. 000	54. 513. 000	54. 513. 000	54. 513. 000	54. 513. 000	54. 513. 000
Վառելիքի և քսանյութերի ծախսերը	111. 579. 200	111. 579. 200	111. 579. 200	118. 421. 200	188. 421. 200	210. 349. 900
Ընդամենը	166.092.200	166.092.200	166.092.200	172. 934. 200	242. 934. 200	264. 862. 900

Աղբյուրը՝ կազմված է հետազոտական խմբի կողմից՝ ըստ Փրկարար ծառայության տվյալների

Քանի որ ծրագրում ձեռք բերվող տրանսպորտային միջոցները, կթարմացնեն հրշեջ սարքավորումները, ապա տվյալ ժամանակահատվածում դեռևս տեխսպասարկման ծախսեր անհրաժեշտ չեն լինի:

Ավելին, ի տարբերություն ներկայիս հրշեջ տրանսպորտային միջոցների, նոր մեքենաները բացի ցածր խափանման աստիճանից, ունեն արդյունավետ վառելիքի ծախս, ինչի շնորհիվ կկրճատվեն տեխնիկական սպասարկման, վառելիքի, յուղի ծախսերը:

2.5 Նախագծի մոտավոր ծախսերը

2.5.1 Նախագծի համատեղ ծախսերը

2.5.1.1 Նախագծի՝ հայկական կողմի ծախսերը

Աղյուսակ 2-10 Հայկական կողմի ծախսերը

Ծախսային հոդված	Ծախսեր /մլն իեն/
Միջբանկային համաձայնագրերի միջնորդավճար	0.1
Հրշեջ տրանսպորտի կայանման տարածքի վերանորոգման և անվտանգության ապահովում	1.2
Պարապմունքի ժմնկ ՓԾ-ի անձնակազմի ճանապարհածախսը, վառելիքի և քսանյութերի ծախսերը	3.1
Ընդամենը	4.4

2.5.1.2 Հաշվարկային պայմաններ

- Հաշվարկի ժամանակը : Դեկտեմբեր 2016
- Արտարժույթի փոխարժեք : Դոլլար – ճապոնական իեն: 1 դոլլար = 105.63 իեն
- Գնումների ժամանակահատված : Տեխնիկաների գնման ժամանակաշրջանում ցույց տրված իրականացման պլանի կատարման գործընթաց
- Այլ : Ծրագիրն իրականացվելու է Ճապոնիա կառավարության դրամաշնորհային աջակցությա հմկգ-ի համապատասխան:

2.5.2 Շահագործման և տեխսպասարկման ծախսեր

Տեխնիկաները շահագործման հանձնելուց հետո մեկ տարվա ընթացքում անխափան աշխատանքի համար անհրաժեշտ վառելիքի և քսանյութերի ծախսերը հաշվարկվում են հետևյալ կերպ:

Հարկ է նշել, որ հաշվարկները իրականացվել 1Հայկական դրամ= 0.237 Յեն առժույթով

2.5.2.1 Տարեկան վազքի հաշվարկ

Տարեկան վազքի հաշվարկը իրականացվում է տեխնիկական սպասարկման, վառելիքի, յուղի ծախսերի հաշվարկների համար

(1) Հրշեջ մեքենա (36 մեքենա)

Տարեկան վազքը՝

Վազքի միջին տարածությունը (երկու ուղությամբ)՝ 27կմ × տարեկան մեկումների քանակությունը՝ 240 անգամ × 18 հրդեհ ջոկատ × 2 մեքենա (տեղակայման քանակություն) = մոտ 233,000 կմ/տ:

(2) Ավտոսանդղակ (3 մեքենա)

Տարեկան վազքը՝

Վազքի միջին տարածությունը (երկու ուղությամբ)՝ 10կմ × տարեկան մեկումների քանակությունը՝30անգամ ×2 մեքենա (տեղակայման քանակություն) = 900կմ/տ:

(3) Շարժական տեխսպասարկման մեքենա(1 մեքենա)

Տարեկան վազքը՝

Վազքի միջին տարածությունը (երկու ուղությամբ)՝ 300 կմ × տարեկան մեկումների քանակությունը՝30անգամ × 1 մեքենա (տեղակայման քանակություն) = 36,000 կմ/ տ

※ՀՀ-ի ներսում վազքը երկու ուղությամբ մոտավորապես 300 կմ է:

2.5.2.2 Տարեկան տեխնիկական սապասարկման, վառելիքի, յուղի անհրաժեշտ ծախսերի հաշվարկները

Ձեռք բերվող սարքավորումների վառելիքի տարեկան ծախսի հաշվարկները իրականացվել են հինք ընդունելով 2.5.2.1 Տարեկան վազքի հաշվարկը ենթագլուխը և հետևյալ պայմանները: Հարկ է նշել, որ մեքենայի մեկումների միջին տարածությունը, տարեկան մեկնումների թիվը՝ ընդունվել են, որպես փաստացի առժեքներ:

- Դիզելի գինը՝ 340դ/լ
- Վառելիքի ծախսը՝ 6.0կմ/լ
